№ 187 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 26 ՕԳՈՍՏՈՍԻ 1915 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 26 ՕԳՈՍՏՈՍԻ № 187

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կայսերական Թատրոնների նախկին արտիստ և երգեցողութեան ուսուցիչ
ՊԵՏՐՕԳՐԱԴՈՒՄ
Բ. Բ. ԱՄԻՐՋԱՆ
ՏԱԼԻՍ Է ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ
(ՁԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ)

Ձայնի կանոնաւորումն և ուղղումն, նոյնպէս և զարգացումն ձայնի, լսողութեան, շնչառութեան և ռիթմայի: Օպերային և համերգային ռէպերտուարի գեղարուեստական դասատուութիւն: Անսամբլ:

Ընդունելութիւնը ամեն օր, բացի տօն օրերից, ժամը 10—3-ը և 5—7-ը:
Հասցէն՝ Միխայլովսկի պր. № 23, սեփ. տուն
տռ. (օ. մ.) 552. 5—4

ԳԻՄՆԱԶԻՕՆ Կ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

պետական կլասիքական գիմնազիօնների դասընթացով և իրաւունքներով: Տղաների և աղջիկների միատեղ ուսուցում:

Բացվում է V դասարան: Վերաքննութիւններն սկսվում են օգոստոսի 25-ից, ընդունելութեան քննութիւնները՝ օգոստոսի 28-ից, պարապմունքները սեպտեմբերի 2-ից: Ուսման վարձը բոլոր դասարաններում աւելացված է 10 ր.: Սերգեյեան փ. ս. տ. № 20:
տռ. (կ. չ. ու.) 562. 4—3

„ԱՐԱՄԱԶԴ" նաւթարդիւնաբերական ընկերութեան նպաստներով **Մեղրիի և Ղափանի** շրջաններում պահվող միջնակարգ դպրոցների համար պահանջվում են **ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ:** Ռոճիկը 420-ից մինչև 500 ր., ճանապարհածախք 25 ր., բնակարան, վառելիք, լուսաւորութիւն և ծառայ: Ցանկացողները կարող են դիմել Յակոբ Քոչարեանին, Тифлисъ, Лермонтовская, 12. Անձամբ տեսնել կարելի է առաւօտեան ժ. 10—2 ը:
տռ. 586. 2—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու ծխական ժողովի որոշման համաձայն, նոյն եկեղեցու ծխական ուսումնարանի հոգաբարձութիւնը բանում է Բ.-րդ բաժանմունք ևս: Նորեկ աշակերտ-աշակերտուհիների ընդունելութիւններն Ա.-ին և Բ.-րդ բաժանմունքներում սկսվում են օգոստոսի 26-ին: Ուսումը կը սկսվի սեպտ. 1-ին:
տռ. 584 2—2 Նախագահ հոգաբարձութեան՝ Գ. աւ.-ք. Մեհրաբեանց

ՔԱՄՈՅԵԱՆ Ս. ԳԷՈՐԳ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

V և VI բաժանմունքների բոլոր առարկաների համար հարկաւոր են, առ նուազն միջնակարգ դպրոց աւարտած, **ուսուցչուհի-ուսուցիչներ:** Կրօն՝ 4 դաս, պատմութիւն՝ 8 դաս, քաղաքացիական ուսմունք՝ 1 դաս, աշխարհագրութիւն՝ 4 դաս, բնական գիտութիւններ՝ 6 դաս, առողջապահութիւն՝ 2 դաս, հայոց լեզու՝ 9 դաս, ռուսաց լեզու՝ 9 դաս, թւաբանութիւն՝ 6 դաս, երկրաչափ. ձևագիտութիւն՝ 2 դաս, նկարչութիւն՝ 2 դաս, երգեցողութիւն՝ 3 դաս, ձեռագործութիւն 4 դաս:

Հրաւիրվելիք ուսուցչուհի-ուսուցիչներից յարմարագոյնին կը յանձնվի տեսչի պաշտօնը առանձին վարձատրութեամբ:

Դասագինն է 40 ռուբլի:

Խնդիրները նախկին պաշտօնավարութեան և կրթական ցենզի վկայականների հետ պէտք է ուղարկել, ոչ ուշ քան ամսիս 27-ը, հոգաբարձութեան նախագահ Ե. Մելիք-Յախտամեանի հասցէով՝ Тифлисъ, Пушкинская ул. № 3.
տռ. 561. 5—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Չորեքշաբթի, օգոստոսի 26-ին
Կը ներկայացվի առաջին անգամ Թիֆլիսի Ժողովարանի բեմի վրա՝ ամենաուրեք խոշոր աջողութիւն ունեցած՝ տաւական ուրախ օպերետը՝
ՆԱ ՉԸ ԼԻՆԻ-ՍԱ ԼԻՆԻ
(Օ օլմասուն—բու օլսուն)
3 գործ. Թարգմ. Թուրքերէնից, Ս. Կարապետեանի
Արևելեան օրկէստր՝ մասնակցութեամբ յայտնի թառ նուագող Բալա Մելիքեանի:
Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին:
Տեղերի գները 50 կ.-ից մինչև 1 ր. 50 կ.:
Մանրամասնութիւնները աֆիշաներում:
Կարգադրիչ՝ Գ. ՓԻՐՈՒՄԵԱՆ
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպէկ:
տռ. 579. 2—2

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈՏՕՐԱՔՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌՕՆՑԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան: ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская, 23. тел. 7—29
տռ. (ա. օ.) 504. 100—23

ԿՆՈՋԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տէլէֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ [illegible], նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն „стаціонаръ" հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելօվզօրով
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշեր
Ս. Փ. Շահպարոնեանց
(չ. ու. կ.) տռ 970. 100—79

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն: Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով:
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից:
(ա. օ.) տռ. 515. 100—14

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Վերաքննութիւնները և նորեկների ընդունելութեան քննութիւններն սկսվելու են օգոստոսի 26-ին: Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ին:
Տեսուչ դպրոցի՝ Ս. ԱԲՈՎԵԱՆ
տռ. (20, 23, 26) 546. 4—4

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 օգոստոսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական: Կովկասեան բանակի շտաբի կողմից.

Օգոստոսի 22-ին ծովափնեայ շրջանում հրաձգութիւն է:

Օլթիի ուղղութեամբ Տէկա շրջանում թուրքերը մեր դիրքերի վրա կրակեցին անհետևանք:

Ալխիգ և Կափիքան գիւղերի շրջանում ընդհարումներ են մեր և թուրք հետախոյզների միջև:

Վանի ուղղութեամբ մեր հետախուզող մասերը աջող խուզարկութիւններ են կատարում:

Մնացած ռազմաճակատում փոփոխութիւն չը կայ:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գ. Պոլսին ածուխ մատակարարելու գործը՝ բազմաթիւ առագաստանաւերով, կատարեալ ֆիասկոյի հանդիպեց: Այժմ թուրք-գերմանացիները փորձեցին վառելիք մատակարարել այլ կերպ. 4 մեծ շոգենաւեր և մի ականակիր նաւ «Համիդիէ» յածանաւի պաշտպանութեան ներքոյ, որը զինված էր երկու 150 միլիմետրանոց և ութ 120 միլիմետրանոց թնդանօթներով և երկու նորագոյն ականակիրներով ծով դուրս եկան:

Օգոստ. 23-ին մեր «Պրօնզիտելնի» և «Բիստրի» ականակիրները, զինված երեք՝ 100 միլիմետրանոց թնդանօթներով, պատահեցին թշնամուն:

Չը նայած թշնամու ուժերի ճնշող գերազանցութեան, մեր ականակիրները յարձակվեցին նրանց վրա:

Կռիւը տևեց 2 և կէս ժամ:

Թշնամին, մեր աջող յարձակումից յետոյ «Համիդիէի» վրա, որի կողմից, ի միջի այլոց, փչացվեց 6 դիւյմանոց մի թնդանօթ, փախաւ դէպի Բոսֆոր:

Մեր ականակիրները հետևեցին նրան:

Երբ թշնամին անցաւ Կեֆքէնը և սկսեց մօտենալ Բոսֆորին, մեր ականակիրները ետ դարձան դէպի ածուխ տանող նաւերը, որոնք մնացել էին ծովում, Զունգուլդակի մօտ, և շտապով խորտակեցին նրանց, դրանով կատարելով ոչ միայն օգտակար, այլ և դրա հետ միաժամանակ էֆֆեկտաւոր և սիրալի գործ այս պատերազմի ընթացքում:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԷԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 օգոստոսի

ՊԱՐԻԶ.—Դարդանէլում օգոստոսի վերջից թերակղզու հարաւային շրջանում հանդստութիւն է: Հիւսիսային շրջանում մի քանի բաւական ուժեղ ընդհարումներ անգլիացիներին հնարաւորութիւն տուին առաջ շարժվելու:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Р. Сл.»-ին հաղորդում են, որ Իզմիրում (Նիկոմիդա) թուրք ամբոխը մորթում է հայերին: Քաղաքն այրված է:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգա-Դվինսկ ռազմաճակատում և դէպի Դվինսկի ուղղութիւններում էական ոչինչ տեղի չունեցաւ:

Սվենտի և Վիլի միջև և Վիլի ու Նեմանի միջև դրութիւնը մնում է նոյնը:

Միջին Նեմանի վրա և Մերեչ ու Պեսկի շրջաններում գերմանացիները օգոստոսի 23-ի գիշերվայ և միւս օրվայ ընթացքում փորձեցին ընդարձակել իրանց առաջխաղացումը:

Կռիւները այստեղ շարունակվում են:

Նեմանից դէպի հարաւ մինչև Պրիպետի մեր զօրքերը մնում են նախկին դիրքերում:

Առաւել նշանաւոր առաջխաղացման փորձ արաւ թշնամին օգոստոսի 23-ի առաւօտից Վօլկովսկ շրջանում երկաթուղու երկարութեամբ, Սէդլեցից Ծասէլզի (Խոմի շրջան) վրայով:

Այս բոլոր փորձերի առաջն առան մեր զօրքերը:

Այս ռազմաճակատի երկարութեամբ եղան միայն յետապահ զօրամասերի ընդհարումներ:

Պոլեսէյից դէպի հարաւ թշնամին շարունակում է կենտրոնացնել իր գլխաւոր ուժերը Լուցկի շրջանից սկսած դէպի Դուբնո և Ռօվնո ճանապարհների վրա, ուր դրութիւնը մնում է անփոփոխ:

Մեր մասնակի յարձակման ժամանակ օգոստոսի 23-ին Վօրբին գիւղի մօտ մենք գերեցինք 8 օֆիցեր և 300 զինուոր:

Սերէտի վրա, նրա ակունքի մօտ, միայն փորձեր եղան առաջխաղացման ինչպէս մեր կողմից, նոյնպէս և թշնամու կողմից:

Այս փորձերը էական հետևանքներ չունեցան:

Օգոստոսի 22-ին մենք այստեղ վերցրինք 4 գնդացիր և 400 զինուոր գերի:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 օգոստոսի

ՊԱՐԻԶ.—Երեկ. պաշտօնական հաղորդագրութիւն.

«Արտիլերիական նշանաւոր կռիւները շարունակվում են Նևվիլի, Ռօշենկուրի շուրջը և Րուայի շրջանում, Շամպանի և Օբերիվ-սիւր-Սուիպ ռազմաճակատի վրա: Արգօններում արտիլերիական կատաղի կռիւ է: Նոյնպէս ուժեղ հրաձգութիւն է տեղի ունենում Ապրեմօնեան անտառում և Ֆլիրէից դէպի հիւսիս»:

ՊԱՐԻԶ.—Ցերեկվայ պաշտօնական հաղորդագրութիւն.

«Գիշերվայ ընթացքում արտիլերիական կատաղի հրացանաձգութիւն էր, ամեն կալիբրի թնդանօթների մասնակցութեամբ Արրասից դէպի հիւսիս և հարաւ և Րօկլենկուրից մինչև Բրետենկուրա ռազմաճակատը: Արգօններում ականային կռիւ է Կուրտշուկի մօտ: Մեր օդաչուները ռումբեր նետեցին Դիէզեմօրաժէի մօտի վագոնների վրա»:

ԲԵԼԳ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

24 օգոստոսի

ՀԱՒՐ.—Բելգիական պաշտօնական հաղորդագրութիւն.

«Աշխատանքներ կատարող թշնամին ետ շպրտվեց դէպի Շոօրբէկ և Դրիգրաուտէն: Արտիլերիական կռիւ եղան Ռամսկապելլէ, Կեզկերէ, Նիւկապելլէ և Րենինգէ շրջաններում»:

ԾՈՎԻՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 օգոստոսի

ԼՈՆԴՈՆ.—«Դապլիբիան» շոգենաւը խորտակվեց այսօր, առաւօտեան ժամը 7-ին: Բոլոր ճանապարհորդներն ազատված են:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 օգոստոսի

ԼՈՆԴՈՆ.—Հրատարակվեց Բալֆուրի բաց նամակը, որի մէջ ասվում է, որ գերմանական կառավարութեան մտադրութիւնները չը պսակվեցին աջողութեամբ. բրիտանական նաւատորմը ուժեղացաւ համեմատաբար 13 ամիս սրանից առաջ: Գերմանիայի ընդունած պատերազմելու սիստէմները՝ սուզանաւերի օգնութեամբ, կատաղութեան միջոց էր. գերմանական սուզանաւային նաւատորմը ունեցաւ խոշոր կորուստներ, որի մէջ է կայանում, Բալֆուրի կարծիքով, դիպլօմատիական յարաբերութիւնների զարմանալի փոփոխութիւնը Գերմանիայի և Միացեալ Պետութիւնների միջև:

ՊԱՐԻԶ.—Թագաւոր Կայսրի՝ Զմերային պալատում եղած խորհրդակցութեանը արտասանած ճառի առիթով «Թանը» գրում է.

«Թագաւորի խօսքերը խոր տպաւորութիւն կը գործեն բոլոր դիւանագիտական շրջաններում: Նրանք բարձր և վճռական պատասխան են գերմանական ջանքերին՝ սեպարատ հաշտութիւն կնքել Ռուսաստանի հետ: Այժմ, երբ գերմանացի ագենտները աշխատում են Միացեալ-Պետութիւններում շարժում սկսել յօգուտ կոնֆլիկտի շուտափոյթ լուծման,—ոչ այսօր և ոչ վաղը շտապողական և անհաստատ հաշտութիւն կնքելու մասին եղած քայլերը ոչ մի արդիւնք չեն ունենայ»:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերմանիայից եկաւ ռուս ինվալիդների իններորդ խումբը, 248 հասարակ զինուորից բաղկացած:

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից հաղորդում են, որ ամբողջ Գերմանիայում արգելվում է անարատ կաթը և հում սերը գործ ածել խմորեղէնների համար: Արգելված է նմանապէս վաճառել հում սերը: Այս կարգադրութիւնը չը կատարողները ենթարկվում են 1500 մարկ տուգանքի կամ 3 ամսվայ բանտի: Զինուորներին Արևելեան ռազմագիծը ուղարկված նուէրների քանակը իշխանութիւնները բաւական կրճատել է, այն պատրուակով, թէ զինուորական պօստը, Ռուսաստանի վատ ճանապարհների շնորհիւ, չէ կարող հասցնել ըստ պատկանելոյն: Ենթադրվում է, որ նուէրների ուղարկումը արևելեան ռազմաճակատը բոլորին կը վերացվի:

ՄՈՍԿՎԱ.—Քաղաքապետը հրատարակել է պարտադիր որոշում, որով արգելվում է ժողովել և դուրս տանել մանր դրամներ 10 ռուբլուց աւելի և ծախել անուանական արժէքից աւելի գնով:

ՏՕԿԻՕ.—Սկսվել է գերմանացի պատերազմական գերիների և Ցինդաօյի նախկին գեներալ-նահանգապետ Վալդեկի հարցաքննութիւնը. նրանց մեղադրում են Ցինդաօն յանձնելու ժամանակ պետական մի միլիօն մարկից աւելի յափշտակելու մէջ:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թոյլատրված է օգոստոսի 30-ին Պետրօգրադում համագումար կազմել փախստական լատիշների օգնութեան հարցի մասին:

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Օրէնքների ժողովածուի մէջ հրատարակված է Բարձրագոյնս հաստատված պետական գանձարանի էմիսիօն իրաւունքի ընդարձակման օրէնքը, նոյնպէս և ֆինանսների մինիստրի կարգադրութիւնը՝ պետական գանձարանի չորս տոկոսանի՝ 100ր. արժէքով տոմսակների (26 միլ. ռուբլու) բաց թողնելու մասին:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Մօտ ժամանակներս Անգլիա է մեկնում ֆինանսների մինիստր Բարկը: Նրա գնալը կապ ունի պատերազմական ծախքերի հետ, որի մասին խորհրդակցութիւն է կայանալու:

◆ Կոպէնհագէնից հեռագրում են, որ Րիևլի շրջակայքում աւստրիացիները գերմանական օֆիցերների ներկայութեամբ հարիւրներով պատժի են ենթարկում լեհերին և ռուսներին: Սլաւօն օֆիցերները, որոնք հրաժարվում են գնդակահարել մահապարտներին, իրանք դատապարտվում են մահվան:

◆ Վարշավայից հաղորդում են, որ շուտով այնտեղ մտցվելու է հացի, մսի և ածուխի մենավաճառութիւն: Հաղորդվում է նաև այն մասին, որ միջադէպ է տեղի ունեցել Կրակովի արքեպիսկոպոսի և գերմանական իշխանութիւնների միջև: Վերջինները պահանջում են, որ արքեպիսկոպոսը քարոզներ խօսի եկեղեցիներում յօգուտ գերմանացիների:

◆ Մինսկի նահանգապետը կոչ է անում

ժողովրդին, որ հարկադրանքով ոչ ոք չի արտաքսվի։ Ազգաբնակութիւնը հնարաւորին չափ պէտք է մնայ իր տեղում՝ տնտեսութիւնը պահպանելու համար։

◆ «Б. В.»-ն հաղորդում է, որ Սերբիան համաձայնել է անմիջապէս զիջումներ անել Բուլգարիային Վարդարի ձախ ափում։ Աջ ափին զիջած հողերը կը տրվեն պատերազմից յետոյ։

◆ Վիլնայից արդէն փոխադրվել են կառավարական հիմնարկութիւնները և դըպրոցական հաստատութիւնները։ Քաղաքում կազմվում է միլիցիա։

◆ Բրեստ-Լիտովսկի կոմենդանտ է նշանակվել Վոլդերզէ, բօքսերական ապստամբութիւնը ճնշող զօրավարի ազգականը։

◆ «В. В.»-ին հեռագրում են Լոնդոնից, որ անգլիական լրագիրները մատնանշում են, որ ոչ մի բերդ այնքան զոհ չէ պահանջել, որքան Կովնօն։ Ենթադրում են, որ գրոհի ժամանակ արեւմտեան շրջանում ընկել են 35,000 գերմանացի։

◆ Հաղորդում են, որ գերմանական զօրքերի շրջանում, որոնք գտնվում են Բելգիայում, անկարգութիւններ են լինում։ Զինուորները հրաժարվում են մտնել Իպրի ռազմաճակատը կռւի, ուր գերմանացիները երեք անգամ պարտութիւն են կրել։ Ցանցաւորները ենթարկվում են դաշտային դատարանի պատժին։ Պատժվածների թիւը հասնում է 700-ի։

◆ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ ռումինական Թագաւորի լռութիւնը և առհասարակ ձեռնպահութիւնը բացատրվում է նրանով, որ նա, ռումինական Թագաւորը, Վիլհէլմից նախազգուշացում է ստացել, թէ ամեն մի հոհենցոլէրն, որ դաւաճանում է տոհմին, չէ կարող պահել իր գահը։

◆ Իտալիայի հետ ընդհարում ունենալուց խուսափելու համար Ցունաստանը իր զօրքերը դուրս է քաշում Ալբանիայի այն մասերից, որոնք մտնում են Իտալիայի շահերի շրջանը։

◆ Գերմանիան, լուրերի համաձայն, երաշխաւորում է Ամերիկային ազատութիւն տալ նրա նաւերի երթեւեկութեան։

◆ Ազգաբնակութիւնը վերադառնում է Րիգա։

◆ Պարիզից հաղորդում են, որ երկու ամսվայ մէջ աւստրիացիները կորցրել են կէս միլիոն մարդ։

◆ «Р. В.»-ին հաղորդում են, որ Բուլգարիան խրամատներ և երկաթալարով ցանկապատեր է շինում սերբ-յունական սահմաններում։

◆ Ունգարիայում աճում է յուզմունք ընդդէմ Վիեննայի կենտրոնական կառավարութեան։

◆ «Б. В.»-ին հաղորդում են Կոպենհագենից, որ «Սեկոլօ» լրագիրը յայտնում է, որ հարաւային Իտալիայում կենտրոնացվում է 200,000 մարդ Դարդանէլի գործողութիւններին մասնակցելու համար։

◆ Գանձակից հեռագրում են, որ յունական տեղական գաղութը Վենիզելոսին ուղարկել է հետեւեալ հեռագիրը. «Հինգ ամսեայ ճգնաժամից յետոյ համահելլէնական յոյսերը յարութիւն առան նորից։ Գանձակի յունական գաղութը, խորապէս հաւատալով ձեզ, ցանկանում է ազգային ակնկալութիւնների իրականացումը»։

◆ Հաղորդում են, որ Ցունաստանը հրաժարվել է Բուլգարիային զիջել դաշնակիցների պահանջած հողերը։ Սոֆիայում կասկածում են, որ Ցունաստանը այդ արել է Սերբիայի խնդրանքով։ Երեւում է, որ ծայր է առնում բալկանեան պետութիւնների նախկին փոխադարձ անվստահութիւնը։

◆ Դիպլոմատիկականապէս հիւանդացած ծովակալ Տիրպիցը ստացաւ երկարատեւ արձակուրդ։ Նա այլ ևս չի վերադառնայ։ Կայսերը արձակում է նաև Բեթման-Հօլվէգին։ Կանցլերութեան առաջարկ է արված Բիւլովին։ Ժամանակի լռջութիւնը և դժուարութիւնն ի նկատի ունենալով նա ժամանակ է խնդրել պատասխանի համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Իգօրկինայա կայարանից, Սիմէօն Դ. Նազարեանից 6 փունտ թէյ՝ 12 ռուբ. արժողութեան։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

(Սեփ. Թղթակցից)

Էջմիածին, 20 օգոստոսի

Այսօր այստեղ եկաւ Թիֆլիսից Հ. Առաքելեան փախստականների և նպաստամ. Ընկերութեան գործերով։ Վաղը գալու է Համառուսական Քաղաքային Միութեան Կովկասի գլխաւոր լիազոր Ալ. Խատիսեանը՝ կազմելու Միութեան Էջմիածնի կոմիտէն և բանալու ծրագրված հիւանդանոցը 500 մահճակալով։

Էջմիածնում պատսպարված փախստականների թիւը այժմ 35,000 է։

Նրանք տեղաւորվել են բոլոր ազատ շինութիւնների մէջ։ Բոլոր անկիւններում, ծակ ու ծուկերում, լճի ափերին, անտառում, վանքի բակում, ճեմարանի բակում, Հռիփսիմէի և Գայիանէի վանքերում, նոր վեհարանի շինութեան մէջ, վերջապէս բոլոր պատերի տակ։ Անտառում՝ լճի ափին, ու դաշտերում նրանք ապրում են բացօդեայ, առանց որեւէ ծածկոցի. ցերեկը սաստիկ տաք է, գիշերը փչում է քամի և փոշի է բարձրանում։ Շատերը լերկ հողի վրա են պառկած, չունեն դօշակ, կամ խսիրների վրա։

—

Էջմիածին, 21 օգոստոսի

Այսօր եկան Ալ. Խատիսեան և Լևոն Եւանգուլեան, բերելով իրանց հետ բժիշկ, սանիտարական և տնտեսական խմբեր։ Անմիջապէս նրանք, մասնակցութեամբ Բագրատ եպիսկոպոսի, Հ. Առաքելեանի, Մոսկվայի Հայկական Կոմիտէի լիազորներ՝ Ս. Թառայեանի, Ց. Թադէոսեանի և բժշ. Հ. Օհանջանեանի սկսեցին քննել փախստականների դրութիւնը, այցելելով բոլոր վայրերը, հիւանդանոցները, որբերի ապաստարանները, մնդական կայանները, փուռերը, լուացարանները, բաղնիքը և այլն։ Շրջագայութիւնը և քննութիւնը պատկերացրեց փախստականների լիակատար դրութիւնը իր բոլոր կողմերով։ Գլխաւոր աշխատողը և ամենամեծ օգնութիւն ցոյց տուողը երկու կազմակերպութիւններն են՝ Էջմիածնի Եղբ. Օգնութեան Ցանձնաժողովը և Մոսկվայի Հայկական Կոմիտէտը. վերջինը իր վրա է վերցրել և փախստականներին կերակրելը, օրական բաց է թողնում 18,000 բաժին կերակուր, իսկ հացը և թէյը հայթայթում է Էջմիածնի Ցանձնաժողովը, ինչպէս և բժշկական օգնութիւնը, որի ղեկավարողն է Թիֆլիսի Հայկ. Կենտրոն. Կոմիտէի ուղարկած բժշ. Օհանջանեանը։ Թէև կան շատ աշխատող ձեռքեր, բայց դարձեալ շատ մեծ պակասութիւն է զգացվում աշխատող ձեռքերի։ Պակասութիւն է զգացվում և հացի, ալիւրի. Էջմիածնի փուռերը չեն կարողանում թխել հաց բոլոր 35,000 փախստականների համար, այլ մի մասը բերվում է դրսից՝ Երեւանից, Թիֆլիսից, Ալէքսանդրօպոլից։ Քննութեան ժամանակ երեւաց, որ Թիֆլիսից Մեսրոպ եպիսկոպոսի և քահանաների ուղարկած 2 վագօն հացը ամբողջովին բորբոսնած է և պէտք է ոչնչացնել. նոյնպէս բորբոսնած դուրս եկաւ և Ալէքսանդրօպոլից ուղարկված 2 վագօն հացը։ Պատճառն այն է, որ վագօնների մէջ լցրել էին հացը տաք տաք և ճանապարհին տաքութիւնից բորբոսնել էր։

—

Էջմիածին, 22 օգոստոսի

Մահացութիւնը փախստականների մէջ շատ մեծ է, օրական միջին թւով մեռնում են 150—170 հոգի։ Սկսեալ յուլիսի 28-ից մինչև օգոստոս 28-ը մահացել են 2978 հոգի։ Իսկ բոլոր փախստականների մէջ, որոնք գտնվում են Երեւանի նահանգի զանազան տեղերում, օրական 350—400 հոգի մահանում են։ Վարակիչ հիւանդութիւններ չը կան, բայց սաստիկ տարածված է փորհարիքը (դիզենտերիա).

—

Էջմիածին, 23 օգոստոսի

Երէկ, օգոստոսի 22-ին, երեկոյեան կայացաւ ժողով՝ մասնակցութեամբ Ալ. Խատիսեանի, Լ. Եւանգուլեանի, զանազան կազմակերպութիւնների ներկայացուցիչների։ Խատիսեան, իբրև Համառուսական Քաղաքների Միութեան լիազոր, բանալով ժողովը, յայտնեց, որ Միութիւնը բանալու է Էջմիածնում հիւանդանոց 500 մահճակալով փախստականների համար, ինչպէս և ախտահանիչ կամերա, բաղնիք, լուացարան և այլն։ Միութեան լիազօր է նշանակված Բագրատ եպիսկոպոսը, իսկ այժմ պէտք է կազմվի նաև յանձնաժողով։ Ցանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Մատթէոս եպիսկոպոս, Բարգէն վարդապետ, Ս. Թառայեան, բժշկ. Հ. Օհանջանեան, Լ. Մանուէլեան։ Որոշվեց Միութեան հաշւով բանալ հիւանդանոց 500 մահճակալով նոր վեհարանի շինութեան մէջ, որի համար և թոյլտւութիւն խնդրել Վեհ. Կաթողիկոսից և Մանթաշեան եղբայրներից։

—

Էջմիածին, 24 օգոստոսի

Այսօր, երկուշաբթի, փախստականների մէջ մահացութիւնը հասաւ 204-ի։ Կան և խօլերայի դէպքեր։

Կառավարութեան կարգադրութեամբ վաղվանից սկսվում է փախստականների էվակուացիան դէպի Գանձակի նահանգը։ Օրամէջ 1500 հոգի պէտք է տեղափոխվեն վագօններով։

Վաղը գալու է մի յատուկ սանիտարական գնացք տանելու համար Բագու 350 և Դիլիջան 200 որբեր։ Ապա 1000 որբեր ևս փոխադրվելու են Թիֆլիս։

—

Էջմիածին, 24 օգոստոսի

Մինչև այժմ Հայաստան վերադառնալու ցանկութիւն են յայտնել և անցագիր ստացել Էջմիածնի Ցանձնաժողովից 18,000 հոգի։ Սակայն նրանցից շատերը դեռ մնացել են Իգդիրում, լսելով որ Բերկրիի մօտ քիւրդերը նորից երեւացել են և ճանապարհը ապահոված չէ։

Վան գնացել են մօտ 700 հոգի։ Վերջերս ստացված տեղեկութիւնները յայտնում են, որ Խալիլ-Բէյը գտնվում է Վանի հարաւային մասում։

Շատ փախստականներ վերադառնում են Ալաշկերտ. կառավարութիւնը թոյլատրել է գնալ և ցանքսերը հնձել։ Ամեն մի աշխատող բանւորի օրական տրվելու է վարձ 1 ր. 60 կ.

—

Կոջորում, Ֆլորա Վարդանեանի Մանկական Ակումբում օգոստոսի 13-ին տեղի ունեցաւ մանկական ներկայացում՝ յօգուտ գաղթականների, որից ստացվեց 125 ր. զուտ արդիւնք։ Այդ գումարը երեխաների ձեռքով տեղափոխվեց Բագւում գտնվող «Գաղթականներին առանց ազգի խտրութեան օգնութիւն» հասցնող կոմիտէին։

—

Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը Երեւանից ուղարկել է հետեւեալ հեռագիրը իշխ. Ա. Ի. Արղութեան Երկայնաբազուկին. «Ալէքսանդրօպոլում փախստականների համար հիւանդանոցը 200 մահճակալով բացվում է օգոստոսի 27-ին։ Փորհարինք և այլ համաճարակային հիւանդութիւն առ այժմ չը կան։ Առանձին կարիք է զգացվում սպիտակեղէնի, որի համար քաղաքների միութիւնը փող չունի։ Միջոցներ ձեռք առէք հասարակական հանգանակութիւն անելու քաղաքում և այլն։ Մեր ձեռք առած միջոցները կիրականանան մօտ օրերս։ Երեւանում հիւանդանոցը 200 մահճակալով բացվում է օգոստոսի 27-ին։ Հիւանդանոցների համար անհրաժեշտ իրերը ապսպրեցի Թիֆլիսից։ Հիւանդանոցների համար կան լաւ շէնքեր։ Փախստականների մէջ խօլերայով և տիֆով հիւանդներ չը կան։ Փախստականները հիւանդ են գլխաւորապէս փորհարինքով և աղիքների հիւանդութեամբ։ Հիւանդանոցային բժշկութեան կարիք են զգում մինչև 1000 մարդ։ Թիւրքիա են վերադարձել ընդհանրապէս 18,000 փախստական։ Խոշոր կարիք կայ զգեստի և անկողնի։ Մեծամասնութիւնը ստանում է միայն հաց։ Գանձակի նահանգը ուղարկվող փախստականների թիւը առ այժմ աննշան է։ Նահանգապետը սպասում է դրամի՝ փախստականներին կերակրելու, որի համար յայտարարութիւն է ներկայացրել նահանգական կոմիտէտը, այլապէս սննդատւութիւնը սաստիկ կը տուժի։ Ընդհանուր կարծիքն է, որ փախստականների թիւը 150,000 է։ Այժմ մեկնում եմ Էջմիածին և Իգդիր։ Դրութիւնը կը հաղորդեմ»։

—

Էջմիածին, 17 օգոստոսի

Այն թշուառ վիճակը, որի մէջ գտնվում են Էջմիածնի գաղթականները, նկարագրել բառերով անկարելի է… Սեփական աչքերով պէտք է տեսնել նրանց տառապանքները, ըմբռնելու համար նրանց դրութիւնը… Սովամահ են լինում շատերը, բառի բուն մտքով. հացի և սնունդի պակասութիւնը զգալի չափով նուազեցնում է նրանց քանակը. առանց չափազանցութեան պէտք է ասել, որ օրական մեռնում են 150-ից մինչև 200 հոգի։ Ինքս ականատես եմ եղել շուկայի հրապարակում մեռնողների, որոնց կառքերի տակ չընկնելու կարելիութիւնը հնարաւոր պիտի լինէր կառապանների անխնայ ուշադրութեան դէպքում միայն… Աշխատող ձեռքերը որքան քանակով առաւել, այնքան որակով նուազ են… Շատերից քչերն են անկեղծօրէն նուիրված ծով կարիքին՝ դարմանելու… Փողի կարիքը այնքան զգալի չէ, որքան նուիրված կամ գէթ պարտաճանաչ գործիչների պակասը. Բժշկական օգնութիւն եթէ ասելու լինենք որ գոյութիւն ունի, ապա անմիջապէս պէտք է կցել դրան՝ անուանական կերպով. հիւանդանոցներն աւելի շուտ վարակման բներ կարող են համարվել, քան բուժարաններ։ Ոչ միայն շուտափոյթ, այլև ուշացած օգնութիւն անգամ գոյութիւն չունի. մեռնում են անխնամ ամեն տեղ. ճեմարանի բակում, տպարանի առաջ, լճի ափին, անտառում, փողոցներում, ամեն տեղ, ի հարկէ և հիւանդանոցներում…

Բազմահազար ամբոխի համար, որի մեծ մասը տառապում է փորհարինքով, արտաքնոցներ չը կան. նեխվում է օդը, ապականումն և գարշահոտութիւն է տիրում ամենուրեք։ Հիւրատան սենեակները մինչև

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԵՕԹԸ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԸ»

II

Բայց սուլթան Համիդի ուրուականը չը կարողացաւ ահաբեկել Ուչարիին։ Մանաւանդ այն միտքը, թէ ինչ գործ ունէր Մայփէքէրը Հայդար-փաշայի հիւանդանոցում, բորբոքեցին Ուչարիի հետաքրքրութիւնը, և նա ամբողջ գիշեր այս մտքով տատանվելուց յետոյ՝ առաւօտ վաղ Սերքէջիի կայարանից շոգենաւ նստեց, անցաւ ասիական ափը՝ Հայդար փաշա։ Նաւամատոյց հասնելուն պէս՝ Ուչարին դիմեց Հայդար-փաշայի հիւանդանոցի դռնապաններին. Նրան անմիջապէս ներս տարան և հիւանդանոցի տեսչուհու՝ Մայփէքէր հանըմի հրամանով առաջնորդեցին գժանոցը, շորերը փոխեցին և բաց թողին հոգեկան հիւանդների շարքին։ Զգաց Ուչարին, թէ ի՛նչ սոսկալի ծուղակն էր ընկել, բայց բոլորովին ինքն իրան չը կորցրեց։ Երբ նորեկին տեսան, մի խումբ հոգեկան հիւանդներ եկան ու նրան շրջապատեցին։ Ամենքն իրանց ցաւն էին արտայայտում և ոչ ոք չէր ուզում նրա խելագարութեանը հաւատալ։ Նրանցից մէկն ասում էր.

— Եղբայր, փոքր կինս, որպէսզի իր տարփածու Նազըմ-բէյի հետ ազատ շարունակէ իր գիւղային յարաբերութիւնները՝ ինձ այստեղ փակել տուեց։

— Օ՜ջ,—ասում էր յուզված մի ուրիշ խելագար,—որպէսզի ինձ կողոպտէ, և ապա վարձատրէ իր թալլամաջի սիրականներին, ինձ խելագար անուանեց և այնպէս կաշառեց բժիշկներին, որ շունչս Հայդար փաշա առայ։

— Էֆէնդի, էֆէնդի,—ասաց մի երրորդը,—այդ մարդիկն իրանց կնոջ ձեռքից են հալածվել. ապա ես ինչ անեմ, ի՛նչպէս տանեմ այս սոսկալի վիճակը, որ ինձ գլուխ բերեց դահիճ աղջիկս։ Որպէսզի կալուածներիս տիրանայ և հասոյթներս ուրացնէ, աղջիկս իր տարփածու լրտեսի օգնութեամբ ինձ խելագար հրատարակեց և բանտարկեց այս օրջը։ Երանի թէ այստեղ մի կտոր կարգին հաց տան և մարդ կարողանայ ապրել, մոռանալ աշխարհն ու իր վայելչութիւնը։

— Ապա ես ինչ անեմ,—ասաց մի ուրիշը,—որ անզգամ հարսս ինձ զաւակիս հետ այս օրջը գլորեց, հազարներիս տիրացաւ, լափում է մեր կասթէմունիցի խոհարարի հետ, մեզ որպէս ցնորածի այս դժոխքը գլորել տալով։

Երբ արդէն 7-րդ խելագարն էլ իր գանգատը յայտնեց, քիչ մնաց, որ երգիծաբանն էլ խելագարվի, բայց Ուչարին իրան զսպեց և առանձնացաւ իրան յատկացված սենեակը, մտածելու թէ ինչ հնարքով փախչի գժանոցից և ինչպէս տեսնի իրան գժվացնող Մայփէքէր հանըմին երկրորդ անգամ։ Այդ միջոցին զաւթում խելագարներին առաւօտեան նախաճաշը տուին, մի մի կտոր սև հաց, մի մի պատառ խաշէր պանիր։

— Մեզ կաթ բերէք, կոֆէ բերէք, կաբաք բերէք, ճերմակ հաց բերէք,—գոռում էին թշուառները, բայց ո՞վ էր լսողը։—Մեր փողը մեզ խնայում էք…

Մինչ Ուչարին մտատանջ՝ իր ծրագիրն էր կազմում գժանոցից փախչելու, յանկարծ նրան մօտեցաւ մի արջաւենի ակնակազմ խելագար, թեւից բռնեց, դուրս քաշեց սենեակից և ասաց.

— Ես այստեղի վերատեսուչն եմ։ Երբ բոլոր խելագարները զբօսնում են բաց օդում, դու ներսը մնալու իրաւունք չունես։

Ուչարին անճարացած հետեւեց, բայց թեւ ցաւից քիչ մնաց խելագարվէր։ Արջաւենին այնպէս հրեց, այնպէս քաշեց, որ թեւ տեղից դուրս եկաւ։ Մայփէքէր-հանըմը, որ հեռուից լուսամուտի ետևից դիտում և հետևում էր, նկատելով Ուչարիի վիճակը՝ խելօք վիրաբոյժ ուղարկեց նրան օգնելու. երգիծաբանին տարան վիրաբուժական հիւանդանոց, որպէսզի թեւը տեղը դնեն։ Երկու ժամից յետոյ՝ արդէն թեւը կապված և տեղն էր քցված։ Բայց այդտեղից էլ փախչելու հնար չը կար։

Երբ ճաշ տուին, վիրաւորներն սկսեցին գանգատվել.

— Եղբայր, սա ապուր չէ, սա լուացված ամանների ջուրն է. ոչ ոյժ կայ մէջը, ոչ ջուր, ոչ եղ, ոչ բրինձ և ոչ էլ միս։ Չէ կարելի ուտել…

— Մի ուտէք,—ասում էին ծառաներն ու դուրս տանում պնակները։

— Եղբայր, սա ինչ փլաւ է. ոչ եղ ունի, ոչ էլ համը միս կայ… փլաւը մեզ կարմրած հաւով էին ուտեցնում, երբ այստեղ մարդիկ էին կառավարում։ Այս հրէշը գալուց յետոյ, ամեն ինչ տակն ու վրա եղաւ։ Ախար մեզնից փող էք առնում, կարմիր ու դեղին ոսկի…

Օրը մթնել էր։ Ուչարին մօտեցաւ թօքախտաւորներին, բորոտներին, քօսոտներին և գօթերին, որոնք բոլորն էլ գանգատվում էին, թէ իրանց սոված տանջում են, քաղցից էլ պիտի մեռնեն։ Երբ այս գանգատները լսեց, զգաց Ուչարին, թէ ի՛նչ ճիւաղի ձեռքն է ընկել, բայց արդէն ուշ էր, պէտք էր մի կերպ խոյս տալ այդ դժոխային օրջից։ Այնպէս բարձր որմերով էր շրջապատած բակը, այնքան շատ պահապաններ կային դռներին, որ փախչելը շատ էլ հեշտ չէր։ Մոլորվել էր Ուչարին, չը գիտէր թէ ինչ անէ։

Գիշերը, երբ պառկեցին վիրաբուժական մասի հիւանդները, Ուչարիի ընկերը նրան ասաց.

— Արշալոյսին բուրաստանի աւազանում, վարդերի մէջ լողանում է մի գեղեցկուհի, որ խելքս գլխիցս թռցնում է։ Ես գժանոցում էի։ Նրա գեղեցկութիւնից հրապուրված՝ պատից բարձրացայ և սաղարթախիտ ծառի մէջ պահված՝ երբ մտածում էի նրա գեղով արբել, յանկարծ մի խափշիկ այնպիսի սոսկալի մի հարուած իջեցրեց գլխիս, որ վայր ընկայ և թեւս ու սրունքս կոտրեցի։ Ահա երեք ամիս է՝ այստեղ տանջվում եմ։

Այս մտքերը իսպառ կտրեցին Ուչարիի հանգիստը, և նա վճռեց, ինչ էլ որ պատահի, գնալ երկրորդ անգամ տեսնել այդ խորհրդաւոր չքնաղին, նոյն իսկ կեանքից զրկվելն աչքի առնելով։ Երբ բոլորը քնեցին, Ուչարին չը կարողացաւ հանգստանալ. նա անվերջ մտածում էր՝ հնար գտնել և դուրս սողալ այդ օրջից։ Այդ ժամանակ ներս մտաւ հիւանդանոցի գլխաւոր հաշւապահը և ասաց.

— Ուչարի, ես լսել եմ, որ դու լաւ հաշւապահ ես, եկ ինձ օգնիր, որպէսզի բալանսը կազմեմ։ Վաղը մայիսի 1-ն է, ես պարտաւոր եմ սուլթանի քարտուղարին հաշիւ ներկայացնելու։

Ուչարին պարտաւորված էր հաշւապահին հետեւելու, որպէսզի մասամբ մոռանայ իր վիշտը։ Երբ հաշիւները քննեց ու կարգի բերեց, արդէն կէս գիշերն անց էր կացել. ուստի հաշւապահի խորհրդով այնտեղ էլ բազմոնների վրա տարածվեցին ու քնեցին։

Արշալոյսին Ուչարին վեր կացաւ. հագնըվելու կարիք չունէր, քանի որ միայն վերնազգեստն էր հանած. դուրս սողաց դէպի բուրաստանը և բարձրացաւ այն մեծ շագանակենու սաղարթախիտ ճիւղերի մէջ թագնվեց, որտեղից շատ պարզ երեւում էր մարմարիոնէ ընդարձակ աւազանը, որի վճիտ ջուրը վարդամատի ցօլքերի տակ արծաթի պէս փայլում էր։

Այդտեղ շատ երկար չը սպասեց Ուչարին. մի քանի րոպէից յետոյ եկաւ Մայփէքէր հանըմը, որին ուղեկցում էին չորս նորատի և գեղանի աղախիններ։ Մայփէքէր հանըմը վերյից վայր գլորեց ծածկոցն ու շղարշը և բոլորովին մերկ թռաւ աւազանի մէջ, լող տուեց։ Աղախինները գիշերնոցները ետ տարան, որ նոր շորեր բերեն իրանց կադընին համար։

Մայփէքէր հանըմի գալը, շորերը վայր գցելը և աւազան թռչելն այնքան արագ կատարվեց, որ Ուչարին հազիւ կարողացաւ զննել այն չքնաղ մարմնի կազմը, որ գերել էր Ալլահի՝ աշխարհի երեսին թողած չքին և նրան ստրկացրել։ Համիդը, որ կարողացել էր հազար սուլթանէ և օդալըկ սանձել և խաղալ իր պալատների խորքերում, գերի էր դարձել Մայփէքէրի ոչ միայն գեղին, այլև հնարքներին։ Եւ այդ չքնաղն իր ամբողջ վարդագոյն ծիրանական մերկութեամբ Ուչարիի առաջ այնպէս էր լողում մարմարիոնէ աւազանի վճիտ ջրերի մէջ, որ ոչ թէ վրդովեցնում, այլ ադամանդի նման պղպջակներով էր ծածկում աւազանի շուրջն ու մակերդակը։

Եւ երբ տիկինը մերկ ջրի ցօղիկների նման գնդակներով պատած դուրս եկաւ աւազանից և տարածվեց թաւշապատ վարդագոյն բազմոցի վրա, էլ Ուչարին չը կարողանալով համբերել՝ ծառի վրայից ասաց.

— Ես չէի հաւատում փերիի գոյութեան, այդ ես աչքերովս տեսայ, հաւատացի…։ Ես չէի հաւատում դրախտի յաւերժական հուրիների գոյութեան, այդ ես տեսայ ու համոզվեցի… Ես չէի հաւատում, թէ Բօսֆորից դուրս դրախտ կայ, ես Հայդար-փաշայի գժանոցում այդ տեսայ ու զգացի…։ Այժմ, դիցուհիս, հաճիր ցուցամատդ շրթունքիս քսել, որ ես բանաստեղծ դառնամ և այդ վարդիթեր ու յաւերժ կուսական մարմնիդ գովքն անեմ, աշխարհին յանձնեմ,—ասաց ու վար իջաւ շագանակենուց, մօտեցաւ մերկ կադընին։

— Քո այդ յանդգնութեան համար՝ ոչ միայն աչքերդ պիտի կուրանան, ոչ միայն լեզուդ պիտի կտրվի, այլ մատներդ էլ պիտի փշրվեն, որ այս աշխարհում լսածդ, տեսածդ և զգացածդ մարդ չիմանայ։ Դու չե՞ս սարսափում Համիդ խալիֆի անունից, դու չե՞ս սոսկում Մայփէքէրի վրէժխնդրութիւնից, դու չը գիտե՞ս, որ ես գօթական անտառների վարազն եմ, սև անտառների յովազը։

— Ես արդէն ամենաքաղցր կեանքս վայելեցի երէկ ձեզ հետ միևնոյն լանդօ կառքում բազմած երես-երեսի, աչք-աչքի, շունչ-շնչի յառած։ Նրանից յետոյ ապրելս, շնչելս, տեսնելս հարամ էր ինձ համար։ Բայց ձեր գթութեան շնորհիւ, ես տեսայ ոչ թէ Մահմէդի նկարագրած, այլ Հաննասի դիցուհիների դրախտը, ես զգացի, ես վայելեցի։ Այժմ շատ գոհ կիջնեմ սև հողի տակ այն յիշատակներով, որոնք դրոշմված են աչքիս ջղերում, ուղեղիս բջիջներում, սրտիս խորշերում, հոգուս ցոլքերում։

— Բայց դու ինձ գժուացնում ես, Ուչարի, եկ համբուրիր ցուցամատս, բայց մի մոռանայ, որ բուրաստանից դուրս գալուդ պէս պիտի մթնէ քո աչքը և պիտի դադարի սրտիդ բաբախումը։

— Դրանից մեծ բաղդ չէի կարող երևակայել,—ասաց ու չօքեց համբոյրը դրոշմելու։

Ատրպետ

(Վերջը միւս անգամ)

այժմ գրաւել էին Մոսկվայից եկած խմբի անդամները, որոնք կարող էին և մասնաւոր տներում ապրել, քանի որ ռոճիկ են ստանում, իսկ հիւրատան կարելի էր տեղաւորել գաղթականներից շատերին, որոնք քաղցի և տապի ճիրաններում են տառապում։ Վարակիչ հիւանդութիւնները բուն են դնում. շատերը, երևի, մեռնում են տիֆով. երևի, որովհետև բաւական խոշոր թիւ առանց բժշկի երես տեսնելու է կընքում իր մահկանացուն, առանց բժշկական ստուգութեան պատռնվում մերձաւորներից և թողնվում մեկուսացած, որևէ ծառի տակ կամ քարի վրա, և որի շուտ կամ ուշ թաղվելը կախված է դիպուածքի սրտաեսութեան առատձեռնից կամ այլ պատահականութիւնից։ Տաճարի բակում ես գցում են մեռելներին. բարձրաստիճան հոգևորականներից մէկն ինձ պատմեց, որ մի երեկոյ իբրև մեռածի դիակների շարքն էին գցել նաև մի երեխայի, որին հետևեալ առաւօտը սրբազանն արդէն տեսել էր պպզած ու լալիս...

Այո, ցաւը մեծ է, ճարը սակաւ. տառապանքն աննկարագրելի և աղաղակող... Իսկ օգնութիւնը... Ո՛հ, իսկական օգնութիւնը շատ պակաս։ Ս. Ցովհ.

—

Մեծ-Ղարաքիլիսա, 22 օգոստ.

Փամբակի շրջանի հազարաւոր փախստականների անմիջական խնամքի ու հոգատարութեան ահագին ծանրութիւնը բացառապէս ընկած է տեղիս «Եղբայրական Օգնութեան» հայկական կոմիտէի վրա, որն, արդարադատութիւնը պահանջում է խոստովանվել, մինչև օրս պատուով է տարել իր անչափ պատասխանատու պարտականութիւնը։

Հարկաւոր է միայն, որ կոմիտէի անդամներն եռանդուն, ներդաշնակ ու համերաշխ գործակցութեամբ ապացուցանեն, որ իրանք ներկայ մոմենտում ընդունակ են վերջ դնելու անհամ վէճերին և խեղդել իրանց մէջ անձնական քէն ու ոխը...

Երկու շաբաթվայ ընթացքում կոմիտէի լիազօրները, հազար ու մի նեղութիւններով, հազիւ կարողացան տեղաւորել գաղթականներին 18 գիւղում, ցուցակագրել և բաժանել առաջին նպաստը։

Այժմ վերջացած կարելի է համարել կոմիտէի սկզբնական դժուար աշխատանքները։ Գաղթականները տեղաւորվել են գիւղերում մի տեղ շատ, միւս տեղ քիչ. անշուշտ նմանօրինակ դեֆեկտները հարթվելու են մօտիկ ապագայում...

Ներկայումս կոմիտէի գրասենեակն ունի շրջանիս բոլոր փախստականների ընտանեկան ցուցակները, որոնցից երևում է, թէ ինչպէս են կատարել տեղաւորման գործը։

Ղշլաղ	31	ընտանիք	135	հոգի
Սարմուսախլի	8	»	53	»
Հաջի-Ղարա	6	»	56	»
Դարբազ	9	»	37	»
Բզովդալ	6	»	52	»
Եաղուբլի	17	»	95	»
Համամլու	76	»	401	»
Նալբանդ	19	»	129	»
Թափանլու	15	»	122	»
Ղալթախչի	39	»	234	»
Աւդիբէգ	36	»	217	»
Աղբուլախ	21	»	160	»
Ղարալ	37	»	212	»
Ղարաբոյ	13	»	61	»
Գեօլեօխսուշ	7	»	63	»
Մեծ-Պարնի	62	»	433	»
Ղարաքիլիսա	104	»	597	»

Մինչև օրս «Եղբայրական Օգնութեան» կոմիտէն դրսից ստացել է միայն պետական նպաստ միանուագ 4000 ր. այսինքն 10 օրվայ հացի գին, իսկ 8000 ր. կամ 20 օրվայ հացի պարէնը մատակարարել են դարձեալ մեր բազմատանջ, բայց համբերատար ու սրտաբաց գիւղերը։

Նպաստը տրվել է դրամով, ալիւրով և այլ մթերքներով։

Հասարակական հիմնարկութիւններից դեռ ևս ոչինչ չի ստացվել, բացի... լիառատ խոստումներից ու հեռագիրներից...

Բայց և այնպէս կոմիտէն անհամբեր սպասում է և յոյսերով ապրում...

Գաղթականները «հաց և բժիշկ» են աղաղակում... Նպաստի գանձարկղը դատարկ է... Դրսից օգնութիւն չը կայ... Է՛հ, «մինչև առուն ջուր կը գայ, գորտի աչքը դուրս կը գայ»...

«Բժշկական շուտափոյթ օգնութեան» մասին գաղթականներն առ այժմ թող Աստուծով մխիթարվեն...

Մի քանի օր առաջ կոմիտէն ունէր, աւելի ճիշդն ասած՝ նրան ուղարկել էին, մի «բժիշկ», որին, 20-օրեայ անփառունակ գործունէութիւնից յետոյ, «զանազան նըրկատումներով» աւելի յարմար համարվեց հեռացնել... Բարի ճանապարհ...

Հեռու մեզնից այն «ազգային գործիչները», որոնք ստնահարելով ամեն մի սրբութիւն՝ տրամադիր են շահագործել յօգուտ իրանց գրպանի և հանգստութեան նոյնիսկ... ազգային մեծ աղէտի թշուառ զոհերը...

Վարակիչ հիւանդութիւններն օրէ-ցօր անխնայ ծաւալվում, տարածվում և բազմաթիւ անմեղ զոհեր են կլանում... Տեղիս բժիշկները զբաղված են իրանց անմիջական պարտականութեամբ, «ժամանակ չունեն հիւանդ փախստականների մասին մտածելու անգամ»...

Կոմիտէի լիազօրի դիմումներից յետոյ հազիւ հազ կարելի եղաւ մօտակայ Ղշլաղ գիւղը տանել աւագ-ֆելդշերին՝ այնտեղ թափթփված 50—60 հիւանդներին քննելու... Ի՞նչ արած... «փլաւ չեղած տեղը, սպասն էլա համով» ասում է խելօք լոռեցին։

Ֆելդշերի անդրանիկ այցելութիւնը մեծ թեթեւութիւն և հոգեկան անսահման մխիթարութիւն պատճառեց գիւղական սրահներին, խոնաւ ու մութ օդաներին, գոմերի ու մարագների յատակների վրա թափված, անանկողին ու մերկ, անմնունդ ու անխնամ գաղթական հիւանդներին։

Հիւանդների համար 40 հատ դեղատուփեր գրվեցին, բայց մինչև օրս դեղօրայք չը կան... Ի՞նչ անի կոմիտէն... Մասնաւոր դեղատունը հօ չի կարող օրական 100 ր. ապառիկ դեղեր բաց թողնել։

Փախստականների հոգատարութեան համար զգացվում է ինտելիգենտ աշխատաւորների խիստ կարիք... Ազատ ձեռքեր շատ կան, բայց պակասում է զգացմունք և ցանկութիւն... Հէնց միայն Մեծ-Ղարաքիլիսայում «պարապ-սարապ» 30—40 ուսուցիչ և ուսանողներ են ապրում... Բայց արի ու տես, որ մեր մտաւոր ուժերը մինչև օրս ոչինչով չեն ապացուցել, որ իրանք անտարբեր ու անգործ չեն կարող լինել ազգային աղէտի ժամանակ... Նոյն սառն ու չէզոք վերաբերմունքը...

Կարծես նրանք Մարս մոլորակի վրա են ապրում, նրանք մի ազգի հարազատ զաւակներ չեն, նրանց ականջին չի հասնում տկարի սրտամաշ տնքոցը, սովածի օգնութեան աղաղակը և որդեկորոյս մօր հեծեծանքը։

Առաջարկվում է մի «ինտելիգենտ» պարոնի՝ կոմիտէի շրջիկ-լիազօրի պաշտօնը։

Երկար «չեմ ու չումից» յետոյ նա համաձայնվում է.

— Կը գամ, ինչու չէ, միայն նախապէս յայտնում եմ, որ 100 ր. պակաս չեմ կարող ծառայել։

Իզուր է անցնում կոմիտէի անդամի բացատրութիւնը, թէ գանձարկղում մի կոպէկ չը կայ, դրսից օգնութիւն դեռ ևս չի հասել, գաղթականները չոր հաց անգամ չունեն, բոլորը սոված են ու անօգնական և այլն, և այլն։

— Ո՛չ, ո՛չ, չեմ կարող, ես ձրիաբար ծառայելուն՝ սկզբունքով հակառակ եմ. կը տաք՝ կը գամ, չէք տայ՝ մնաք բարով։

Այսպիսի փաստերից յետոյ՝ դեռ ևս մեր մամուլը, միակողմանի կերպով, իր սուրն ու սլաքն ուղղում է բացառապէս հարուստների վրա... Մ.

ՄՈՍԿՎԱՅԻ ՁԱՅՆԸ

—

«Մշակի» № 183-ում տպվեց հեռագրական այն լուրը, որ Մոսկվայի քաղ. դուման իր արտակարգ նիստում յայտնելով իր հաւատարիմ հպատակութեան զգացմունքները՝ որոշել է միջնորդել Բարձրագոյն իշխանութեան առջև՝ փոփոխութիւն մտցնելու կառավարութեան կազմի մէջ և այնպիսի իշխանութիւն կազմելու, որ վստահութիւն վայելէր երկրում։

Այսօր վերջին պոստով ստացված մայրաքաղաքի թերթերից մենք ծանօթանում ենք այդ պատմական նիստի մանրամասնութիւններին։ Ժողովին խօսել են Ն. Ի. Գուչկովը, որպէս դումայի աջակողմեանների ներկայացուցիչ, և Ա. Դ. Ալֆերովը, որպէս ձախակողմեանների ներկայացուցիչ։

Գուչկովը ի միջի այլոց ասել է.

«Ներկայ ծանր վայրկեանում Մոսկվան պարտաւոր է ասել իր խօսքը, և ամենից առաջ առանց կասկածի պէտք է հաստատել, որ համայն ռուս ժողովուրդը պահանջում է պատերազմի շարունակումը մինչև յաղթական վախճանը։ Մոսկվան պէտք է ապացուցել, որ մեր մաքառման աջողութիւնը ամենից առաջ կախված է միաբանութիւնից։ Այդ միութիւնը պէտք է արտայայտվի Պետական Դումայով։ Անհրաժեշտ է, որ այնտեղ կազմվի մի խուռն մեծամասնութիւն, որ կարող լինէր արագ կերպով վճռել բոլոր հասած խնդիրները, համաձայն համայն երկրի ցանկութեան։ Եւ միայն այն ժամանակ ժողովրդական կամքը կը կատարվի։ Դուման պէտք է աշխատի կառավարութեան հետ լի համերաշխութեամբ միայն այն պայմանով, եթէ նրա կազմի մէջ կը մտնեն հասարակութեան վստահութեամբ և հաւատով օժտված եռանդուն մարդիկ, որոնք պէտք է աշխատեն Դումայի և երկրի հետ ամենայն համաձայնութեամբ։ Նոյն պահանջներին պէտք է համապատասխանէ և գործադիր իշխանութեան պետը։ Եւ միայն այն ժամանակ կապահովվի աջողութիւնը։ Քաղաքային դուման այս ցանկութիւնները պէտք է յայտնի և Նրան, դէպի Որը ուղղված է համայն Ռուսաստանի հայեացքը, դէպի Արքան»։

Իսկ ձախակողմեանների ներկայացուցիչ Ա. Դ. Ալֆերովը ասել է.

«Մոսկվային է նայում ամբողջ Ռուսաստանը. նրան են նայում զօրքը, գաւառը, մեր դաշնակիցները։ Նա ոչ թէ երկրի մտքի արտայայտիչն է, այլ աւելին. նա յենարանն է երկրի։ Մոսկվայի ձայնը պէտք է հնչէ ուժեղ և յաղթական։ Մենք պէտք է ցոյց տանք, որ արիութիւնը երբեք չէ բաժանվում մեզանից»։

Իր ճառի վերջում Ալֆերովը միացել է Գուչկովի առաջարկին։

Մ. Վ. Չելնոկովը ասել է.

«Մենք ապրում ենք առանձնայատուկ պատասխանատու վայրկեանում։ Մոսկվայի դուման պէտք է կատարէ իր պարտականութիւնը ոչ միայն որպէս քաղաքի ներկայացուցիչ։ Մենք պէտք է մեզ վրա վերցնենք ինչ-որ աւելի մեծը։ Մոսկվան պէտք է ասէ, որ հասկանալով դրութեան բոլոր լրջութիւնը՝ գտնում է, որ յուսահատութեան դեռ տեղիք չը կայ։ Դուման ամուր կերպով պէտք է որոշէ մեր յաղթութեան պայմանները»։

Վերջում Մ. Վ. Չելնոկովը առաջարկել է հետևեալ րեզոլիւցիան, որ միաձայն և ծափերով ընդունված է.

1) Մոսկվան գիտէ, որ թշնամու իշխանութեան տակ են մեր մի շարք քաղաքները և նոյն իսկ բերդերը։ Բայց Մոսկվան անկոտրուն և հաստատ կերպով հաւատում է ռուս զօրքին և նրա զօրավար Մեծ Իշխանին, ու պատրաստ է լարել իր բոլոր ուժերը յաղթութիւնը ապահովող պայմանների ստեղծման համար։ Պատերազմը պէտք է շարունակել մինչև վերջը։ Հաշտութիւն պէտք է կնքել միայն թշնամուն լիապէս յաղթելուց յետոյ և բոլոր դաշնակիցների միանման համաձայնութեամբ։

2) Պատերազմը թևակոխել է նոր փուլի մէջ։ Ստեղծված դրութիւնը դնում է նոր, աւելի պատասխանատու խնդիրներ։ Այս րոպէից երկրի բոլոր ուժերը, ազգաբնակութեան բոլոր խաւերը պէտք է միաբանեն ընդհանուր լարված աշխատանքով, որպէսզի ձեռնարկեն ամեն ինչ, որ տանում է դէպի յաղթութիւն։

3) Յաղթութեան ձեռք բերելը հիմնաւորվում է ժողովրդական ներկայացուցչութեան և երկրի միաձուլմամբ։ Մոսկվան հաւատացած է, որ Պետական Դուման այս ժամիս կը կարողանայ իրականացնել երկրի թելադրած ցանկութիւնները։

4) Ներկայի պատասխանատու խնդիրները պահանջում են հանրութեան վստահութեամբ և համերաշխութեամբ ուժեղ կառավարութեան հաւաքումը, որի գլուխը պէտք է կանգնած լինի մի անձնաւորութիւն, որին հաւատում է երկիրը»։

Այս մասին մեր խօսքը կասենք հետևեալ անգամ։

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Մահվան 40-օրեակի առիթով)

Կան անհատներ, որոնք իրանց բարոյական խոշորութեամբ, իրանց հոգու մեծութեամբ հասարակական կեանքի տատանումների ու ալեկոծութեան ժամանակ հայեացքները դէպի իրանց ուղղողներին յոյս ու աբիութիւն են ներշնչում։ Վահան վ. այդպիսի անհատներից էր։ Ինչպիսի տարաբերումների ենթարկվէր մեր ազգային կեանքը, որպիսի հոսանքներ վար ու վեր լինէին հայկական մթնոլորտում, ամենին յայտնի էր, որ Վահան վարդապետը յուսահատվողը չէր, իր համոզմունքներին դաւաճանողը, իր հաւատարմութիւնը կորցնողը չէր։ Ծրաշէն մեղուի նման, օրն ի բուն, գլուխը կախ, անաղմուկ կը շարունակէր նա իր ազգաշինութեան գործը. որևէ Վարդաշէն գիւղում դպրոց բանալով, ս. Խաչ վանքի կալուածները բարեկարգելով, թէ Էջմիածնի հայրապետական դիւանում կամ սինոդում ազգի գործերը վարելով, նրանց ուղղութիւն տալով։

Ես բաղդ եմ ունեցել գոլիցինեան սև օրերին աքսորանքի ենթարկված այդ ալեզարդ ծերունու հետ ծանօթանալու 1910 թւի ամառը ս. Խաչ վանքում, իսկ աւելի մօտից՝ 1913 թւի ձմեռը կրկին ս. Խաչ վանքում, որտեղ ես անցրի իմ 40-օրեայ ապաշխարութիւնս քահանայ ձեռնադրվելուց յետոյ ու վայելեցի հանգուցեալի բարեսէր հիւրասիրութիւնը մի ամբողջ ամիս։ Այդ օրերին արտաքինով փոքրիկ Վահան վարդապետը հետզհետէ իր հոգեկան բարեմասնութիւններով մեծանում էր իմ աչքի։ Անյողդողդ ու աննկուն կամքի, որոշ համոզմունքի և հաստատուն աշխարհահայեացքի, սկզբունքի ու գաղափարի տէր անձն էր հանգուցեալը, մի եռանդուն ու վերին աստիճանի բարեխիղճ գործիչ։

Վահան վարդապետի համոզմունքով՝ դըպրոցը պիտի պատրաստէր ապագայ ազատ Թիւրքաց Հայաստանի համար պարտաճանաչ քաղաքացիներ և բանիբուն գործիչներ։ Դեռ վաթսունական թւականներին հանգուցեալը Ղզլարում փորձում է մի փոքրիկ դեմոկրատիկ հիմքերով առաջնորդվող ընտանիք դարձնել իրան յանձնված դպրոցը։ Նա աշակերտներից ընտրում է դատական մի մի մարմին՝ իր նախագահով, դատախազով, իրաւաբանով, բոլորն էլ աշակերտութիւնից, որը դատում էր աշակերտների արարքները, պատիժ նշանակում, իրագործում և այլն, և տեսնում է, թէ դաստիարակութեան այդ ուրոյն սիստեմն որպիսի բարերար ազդեցութիւն է ունենում աշակերտութեան վրա։

Այսպիսով՝ պահպանողական Վահան վարդապետը մի ժամանակ «կօմիտաչիի» դերում է լինում, ինչպէս յետագայում կատակում էր հանգուցեալը։ Այնուհետև նոյն Վահան վարդապետը Բագուից «Կասպիացի» ստորագրութեամբ մի շարք լուրջ և ուշագրաւ յօդուածներ է տպում «Մշակում» և այդպիսով մի պատուամիտ թերթի «գաղեթաչին»՝ աշխատակիցը դառնում։

Ութսունական թւականներին, Մակար կաթողիկոսի հրաւէրով և ցանկութեամբ, մըտնում է Էջմիածնի միաբանութեան շարքը և աչքի ընկնում սինոդում և Ամենայն Հայոց Կաթողիկոսարանում իր ազգօգուտ, խոհեմ, շրջանկատ ու լուրջ գործունէութեամբ, երկաթի նման կարծր համոզմունքով։ Այս ամենի համար Գոլիցինի հրամանով աքսորվում է Էջմիածնից. Նահապետ վարդապետի հետ միասին։ Հանգուցեալը մօտ 20 տարի անցնելուց յետոյ էլ առանց յուզմունքի չէր կարողանում պատմել իրանց հեռանալը Մայր Աթոռից, որտեղ թողնում էին նրանք ծերունազարդ Հայրապետին ազգի տագնապալից օրերին, արտասուալի աչքերով, տարտամ վիճակի մէջ... Այդ աքսորից յետոյ Վահան վարդապետը այլ ևս չը վերադարձաւ Մայր Աթոռ. Նա բնակութիւն հաստատեց իր շինցրած ս. Խաչ վանքում և նրա հովանու ներքոյ էլ գտաւ իր անդորրը։

Հանգուցեալը տարօրինակութեան չափ համեստ մարդ էր։ Երկու անգամ նախ հանգուցեալ Իզմիրլեան Հայրապետից, ապա՝ ներկայ Վեհափառ Գէորգ Ե. Կաթողիկոսից հրաւիրվում է Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրվելու, սակայն երկու անգամ էլ տկարութեան պատճառով հրաժարվում է։ Մի հազուագիւտ դէպք մեր փառատենչ դարում։ Վահան վարդապետը չէր կրում ոչ լանջախաչ, ոչ ծաղկեայ փիլոն և ոչ էլ մի որևէ պարգև։

Վահան վարդապետի մահն անսպասելի չէր ոչ ոքի համար. նա թէ ծեր էր և թէ երկու անգամ կաթուածի ենթարկված, սակայն նրա մահը չափազանց ցաւալի է, քանի որ յանձին նրա գերեզման է իջնում մեր արժանաւոր, հին տիպի հոգևորականներից մէկը, մի անկաշառ, բարեխիղճ, անձնուէր գործիչ, որի համար չը կար ոչ մի կուսակցութիւն, այլ գործ. նա պատրաստ էր ամեն մարդու հետ գործելու, միայն թէ այդ գործը յօգուտ ազգի՝ եկեղեցու լինէր։

Ահա թէ ինչու մեր այս կուսակցական և անհամերաշխ դարում Վահան վարդապետի մահը առաւել զգալի է դառնում։

Արդարի յիշատակը թող օրհնութեամբ յիշվի։ Արսէն ք. Սիմէօնեան

Մոսկվա

ՀԱՅ ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

—

Ամսիս 21-ին Թիֆլիսի քաղ. դումայի դահլիճում կայացաւ Զուբալովի անուան Ժող. Տանը գործող Հայկական Դրամատիկ Խմբակցութեան տարեկան ընդհ. ժողովը։ Ներկայ էին 42 անդամներ։ Ժողովին նախագահ ընտրվեց Մ. Յարութիւնեան և քարտուղար Մ. Մարութեան. Նախ քան օրակարգի խնդիրներով զբաղվելը, ժողովը յոտնկայս յարգեց հանգուցեալներ՝ Խմբակցութեան պատուաւոր անդամ Լ. Կ. Զուբալովի, Խմբակցութեան անդամ-սիրող Ս. Պօյաճեանի և դերասանուհի Սաթենիկ Ադամեանի յիշատակները։

Այնուհետև Խմբակցութեան նախագահ Ա. Նազարեթեան բանաւոր կերպով զեկուցեց ժողովին Խմբակցութեան 1914—15 թատերաշրջանի գործունէութեան մասին, շեշտելով որ ներկայ թատերաշրջանը համեմատած նախկինների հետ՝ թէ՛ բարոյական և թէ նիւթական մեծ աջողութիւն է ունեցել, որի շնորհիւ վարչութիւնը բացի նախկին թատերաշրջանից մնացած մօտ 350 ր. պարտքի, Գ. Երիցեանի պարտքի փոխարէն տ. Մայսուրեանին կատարողական թերթով 154 ր. 47 կ. վճարելը, նաև ներկայացումների արդիւնքի $2^{0}/_{0}$, որը անում է 82 ր. 83 կ., յօգուտ պատերազմից վնասվածներին յատկացնելը, ունեցել է 940 ր.։

Ապա ժողովը զբաղվում է հաշիւների քննութեամբ և լսում վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը այդ մասին, որից յետոյ վաւերացնում է հաշիւները։ Ժողովը շնորհակալութիւն է յայտնում վարչութեան անդամ Մ. Սաամբոլցեանին, վերջինիս ցոյց տուած անխոնջ աշխատանքի համար, խմբակցութեան գրադարանի և գոյքի վերաբերեալ. քննութեան է ենթարկվում 1915—1916 թ. թատերաշրջանի նախահաշիւը, որը վաւերացվում է առանց փոփոխութիւնների։ Որոշվում է թատերաշրջանի բոլոր ներկայացումների մուտքից յատկացնել յօգուտ հայ փախստականների $5^{0}/_{0}$, բացի դրանից սեզոնի ընթացքում նոյն նպատակով կազմակերպել մի զուտ ներկայացում։ Ի վերջոյ ժողովը անցնում է վարչութեան 7 անդամի և 3 փոխ-անդամի ընտրութեան. առաջարկված 10 թեկնածուներից ընտրվում են վարչութեան անդամներ Ա. Նազարեթեան (40 սպ., 1 սև), Ա. Էլիզբարեան (38 սպիտակ, 2 սև), Ս. Գալստեան (37 սպ. 3 սև) Մ. Սաամբոլցեան (37 սպ., 4 սև), Կ. Շիրինեան (34 սպ., 6 սև), տ. Վ. Աբովեան (34 սպ., 10 սև), Յ. Մալխասեան (31 սպ., 8 սև), տ. Վ. Մամուլեան (31 սպ., 8 սև) և Գաւրօշ (21 սպ., 18 սև). Վերջիններից երկուսը մնում են փոխ-անդամներ։ Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեան, որ օգոստոսի 19-ին մեկնեց Էջմիածին փախստականների և Նպաստամատոյց Ընկերութեան գործերով, երէկ, օգոստ. 25-ին, վերադարձաւ Թիֆլիս։

◆ Պետրոգրադից Պետ. Դումայի անդամ Մ. Պապաջանեանից ստացվել է Թիֆլիսում հեռագիր, որով հաղորդվում է, որ Բարձրագոյն ներման է արժանացել գրական և հասարակական գործիչ Աւետիք Ահարոնեան, որ վաղուց ի վեր գտնվում էր արտասահմանում։

◆ Այսօր, չորեքշաբթի, Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ ուղղափառ հոգևորականութիւնը կատարելու է մաղթանք ռուս զէնքին յաղթութիւն շնորհելու համար։

◆ Նահանգապետը յայտնեց քաղաքագլխի պաշտօնակատարին, որ իր կողմից արգելք չը կայ՝ դումայի օգոստոսի 13-ին կայացրած որոշումը իրագործելու, այն է՝ միջնորդելու, որ Վարշավայի պոլիտեխնիկումը փոխադրվի Թիֆլիս։

◆ Քաղ. վարչութիւնը Հիւսիսային Կովկասում ապսպրել է 100 վագոն ալիւր, որը պէտք է ծախվի առքի գնով՝ գոյութիւն ունեցող սակագնից պակաս։

◆ Իրաւաբան Ա. Բաբեան մի յայտարարութիւն է ներկայացրել քաղաքագլխին, որի մէջ ասում է, թէ անհրաժեշտ է, որ քաղ. վարչութիւնը միանայ Մոսկվայի քաղ. վարչութեան ընդունած բանաձևի հետ և ընդունի Կովկասի հասարակական գործիչների 5-րդ համագումարի անհրաժեշտութիւնը։ Այս յայտարարութիւնը քննելու համար Ա. Բաբեանը առաջարկում է գումարել քաղ. դումայի արտակարգ նիստ։

◆ Երկրագործական դեպարտամենտի Կովկասի լիազօրը շրջաբերական գրութիւններ է ուղղել Սուխումի, Սօչիի գիւղատնտեսական կայարաններին, Երևանի Սարդարի այգուն, Ղարայազի և Քութայիսի փորձնական դաշտերի կառավարիչներին, գիւղատնտեսական ստորին դպրոցներին և այգեգործական ուսումնարաններին, որոնք գտնվում են Կովկասում, առաջարկելով անմիջապէս կազմակերպել պտուղներ չորացնելու գործը, որպիսի պտուղները պէտք է գնայ զօրքի պէտքերի համար։ Շրջաբերականում, ի միջի այլոց, ասված է, որ ներքին նահանգներում միրգերն պատրաստելը և Թիֆլիս հասցնելը կարժենայ 11 ր. 54 կ. պուդը։

◆ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ն. Ֆ. Ռուդոլֆը ամսիս 24-ին, պաշտօնական գործերով մեկնեց Օսեթիա։

◆ Բագուի Հայոց Մարդասիրական Ընկ. նախագահ Հայկ Տէր-Միքայէլեան, որ մի քանի օր գտնվում էր Թիֆլիսում փախստականների գործի առիթով, երէկ երեկոյեան մեկնեց Էջմիածին։

◆ Կովկասեան զօրքերի հրամանատարը թոյլատրել է, որ գերիներին տրվի օրական $^{1}/_{2}$ ֆունտ միս մինչև նրանց համար բնակելու տեղ նշանակելը։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ Ժողովրդական Տան հայկական դրամատիկ խմբակցութեան սեզոնը բացվելու է սեպտ. 4-ին. բացումը լինելու է Րաֆֆիի «Դաւիթ բէկ» պիէսով։ Ռեժիսոր է հրաւիրված Ամօ Խարազեան։

◆ Վրաց «Սաքարթվէլօ» թերթը հաղորդում է, որ մօտ ժամանակներս Բաթումում սկսվելու է աջարացիների գործի քննութիւնը, որոնք դատի են ենթարկվում պետական դաւաճանութեան համար։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Քաղ. միութեան Վլադիկավկազի կոմիտէտը ընտրել է առանձին յանձնաժողով, որը կազմակերպելու է զօրականներին արհեստ և գրագիտութիւն սովորեցնելու գործը։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Եկատերինոսլավում, Խարկովում, Օդեսայում և Կրեմենչուգում զգացվում է հնչիւն դրամի պակասութիւն։

◆ Նիժեգորոդի, Կոստրոմայի և Սարատովի քաղ. դումաները միացել են Մոսկվայի քաղ. դումայի որոշմանը։ Կոստրոմայի դուման արտաքին և ներքին գերմանացիների՝ բարձր պաշտօն ունեցողների դէմ մաքառելու համար որոշում է կայացրել, որ գործի պէտք է կոչվեն հասարակութեան վստահութիւնը վայելող գործիչներ։

◆ Դատապարտված սոց.-դեմ. պատգամաւորները միջնորդութիւն չեն հարուցանում ներման համար։ Այժմ գտնված է ուրիշ միջոց. ներման խնդիրը պէտք է տայ Պետական Դումայի Նախագահ Ռօձեանկօն։ Ենթադրում են, որ այդ ճանապարհով հարցը կը լուծվի։

◆ «Б. В.»-ն հաղորդում է, որ Գորեմըկինի յաջորդի հարցը կորոշվի օգոստոսի վերջին։ Մինչև կառավարութեան նոր գլխի նշանակման հաղորդագրութեան երևան գալը ոչ մի փոփոխութիւն տեղի չի ունենայ մինիստրների միջև։

◆ Տվերի քաղ. դուման միացել է Մոսկվայի ձայնին և նրա քաղաքական որոշումներին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Памятники армянскаго искусства Ани—Дворцовая церковь. Подъ редакціей академика Н. Я. Марра, по обмѣрамъ и чертежамъ архитектора-художника Н. Г. Буніатова. Петроградъ 1915, ц. 5 р. 50 к.

Հայ արուեստի յիշատակներ, Անի—Արքունեաց եկեղեցի. խմբագրութեամբ ակադեմիկոս Ն. Մառի. ըստ չափերի և գծագրութեան ճարտարապետ-նկարիչ Ն. Բունիաթեանի։ Պետրոգրադ, 1915, գինն է 5 ր. 50 կ.

—

Պատմական Հայաստանի գրականութեան և արուեստին նուիրված ամեն մի նոր աշխատութիւն, որ լոյս է տեսնում հեղինակաւոր և մասնագէտ անձերի կողմից, գալիս է լուսաւոր աշխարհի առաջ նորանոր փաստերով ապացուցելու այն, որ մեր բազմաչարչար հայրենիքը դեռևս շատ դարեր առաջ ունեցել է իր նախանձելի կուլտուրական կեանքը։ Ակադեմիկոս Ն. Մառը, որի անունն այնքան սերտօրէն կապված է մեր Բագրատունիների մայրաքաղաքի հետ և որը իր լաւագոյն տարիները նուիրել է հայոց պատմա-կուլտուրական կեանքի ուսումնասիրութեան, իր հիմնած Անիի Հնադարանի հրատարակութեամբ վերջերս սկսել է լոյս ընծայել մի շարք խիստ շահեկան գործեր թէ իր և թէ իր աշխատակիցների հետազօտութիւններից։ Պ. Մառը այդ կարգի գործերը բաժանել է չորս շարքի. ա) Անիի շար, բ) Հայ արձանագրութեան նշխարներ, գ) Հայ արուեստի նշխարներ և դ) Անիի հնութիւններ։ Այս ներկայ աշխատութիւնը, որի մասին խօսում ենք, ինչպէս մեր վերնագրից երևում է արդէն, պատկանում է «Հայ արուեստի» շարքին։

Անիի պալատական եկեղեցին իր հնութեամբ և կառուցուածքի ուրոյն կազմութեամբ միակն է Բագրատունիների մայրաքաղաքի, մէջ և նրա պատմութեան նորանոր ճշգրիտ տուեալների համար պարտական ենք Մառըի պեղումներին և հետազօտութեան։ Ներկայումս տպագրվում է անուանի գիտնականի յատկապէս այդ եկեղեցուն նուիրված ուսումնասիրութիւնը. իսկ մինչ այդ, պ. Մառը լոյս է ընծայել ներկայ աշխատութիւնը, որ ըստ երևոյթին ցուցադրական դեր է կատարելու բուն աշխատութեան, քանի որ ունի միայն մի առաջաբան, մնացածը ճարտարապետ Բունիաթեանի գծանկարներն են և լուսանկարները։

Առաջաբանը գրված է երեք լեզուներով՝ ռուսերէն, հայերէն և ֆրանսերէն։

«Նախաբանի» թարգմանութիւնները, որ տրված են ռուսերէն բնագրի առընթեր, արել է հայերէնը՝ Ն. Ադոնց, իսկ ֆրանսերէնը Պ. Լեարոնը։

«Անի քաղաքի արքունեաց եկեղեցին նուիրված է եղել երկու սուրբ ձիաւոր զինուորի. ըստ երևոյթին եկեղեցու այդ հովանաւորներն եղել են ս. Սարգիսը, որ վայելում է հայոց մէջ առանձին հռչակ, և ս. Թէոդորոսը, կամ գուցէ ս. Գէորգը։ Սրանց բարձրաքանդակ նկարը, դեռ ևս ԺԹ. դարի կէսին զարդարելիս է եղել հիւսիսային դրան տիմպանի քարի տախտակը»—այսպէս է սկսում Ն. Մառը իր նախաբանը։

Տալով Միջնաբերդի (ուր գտնվում է այդ եկեղեցին) նկարագրութիւնը և այնտեղ Բագրատունիների իրանց արքունիքն հաստատելը, հեղինակն անցնում է եկեղեցու համառօտակի նկարագրութեան, որ «արքունեաց եկեղեցին հին հայոց բազիլիկ տաճարների պարզ տեսակն է... Տաճարը կարելի է համարել Ե—Զ դարերի յիշատակարան, համահասակ Տեկորի տաճարի, որ նոյն (Շիրակ) գաւառումն է։ Շիրակ գաւառն այն ժամանակ և յետոյ մինչև Ը դարի վերջը Կամսարական իշխանների սեփականութիւնն էր։ Սուրբ զինուորների անուան Արքունեաց եկեղեցին էապէս վերաբերում էր նոյն հայ իշխանների դարաշրջանին»։

Եկեղեցու հարաւային պատի վրա դրսից զետեղված է չորս տող արձանագիր, որ է այս.

«Ես Աբիսողոմ վարդապետս շին(ե)ցի զեկեղեցիս ի թուականութեան Հ ա (յոց)»։

Սկզբում կարծվել է թէ վերջին երկու տառը ՀԱ (71) հայոց թւականն է և ուրեմն (622) եկեղեցին եօթներորդ դարու գործ է. բայց երբ անցեալ տարվայ պեղումներից գտնվել է մի ուրիշ արձանագրութիւն, պարզվել է, որ «Աբիսողոմ վարդապետի դերը չի վերաբերում հին շինութեան ժամանակին»։

Արքունեաց եկեղեցին նորոգութեան է ենթարկվել Թ—Ժ դարում, իսկ յետագայում եկեղեցու կողքին, հիւսիսից նրան կպած, շինել են երկյարկ մի փոքրիկ եկեղեցի, «որ վերաբերում է անկասկած ԺԳ դարին»։

Անշուշտ հայ գեղարուեստի պատմութեան մէջ այս եկեղեցին իր ուրոյն կազմութեամբ և նկարագրով հետաքրքրական տեղ ունի գրաւելու, և պ. Մառը այդ յիշատակարանի մասին «աւելի մանրամասն տեղեկութիւններ» ունի տալու իր յատուկ աշխատութեան մէջ, որ, ինչպէս ասացինք, մօտիկ ապագայում լոյս է տեսնելու։

Պեղումները Միջնաբերդում դեռ չեն վերջացած, իսկ Արքունեաց եկեղեցու շուրջը աշխատանքը հնարաւոր է եղել եռանդուն շարունակելու այն ժամանակ միայն, երբ եկեղեցու արևմտեան երեսը ամրապնդել են ու փլչելուց ազատել։ Նորոգումը աջողվել են 1912 թւին այն գումարով, որ նուիրել է Ի. Զաւրեանը։

Իր նախաբանի վերջում պ. Մառը յայտնում է.

«Անիի Հնադարանի հրատարակութեանց նոր շարքի ներկայ բաշխը լոյս է ընծայվում Պետրօգրադի հայոց եկեղեցիների ծախսով, որոնց խորհուրդը իր տեւուն և առատ նուիրաբերութեամբ հանդիսանում է իրօք Անիի նախաւշութեան մեկենասը»։

Այժմ մի քանի խօսք պատկերների մասին։

Հեղինակի նախաբանից երևում է, որ նիւթերի հրատարակութեան պատրաստելը տեսնվել է մի քանի անգամ։ Շէնքի չափման առնելը և գծուածքների պատրաստելը նախ յանձնված է եղել ճարտարապետ ուսանողներ պ. Կնեազնիցկիին (1912 թ.) և Ռ. Քեանդարեանցին (1913 թ.), որոնք մենակ աշխատելու պատճառով չեն կարողացել գործը գլուխ հանել։ 1914 թւին գործը յանձնվել է ճարտարապետ Ն. Բունիաթեանին, որը և աշխատակցութեամբ Բ. Դանշիչի կատարել է գործը բարեխղճօրէն և խնամքով։ Տախտակ օրինակների թիւը 20 է, որից գծանկարներ 8, չափսերի սևագրութիւններ 6 և լուսանկարներ 6։ Տպագրութիւնը կարելի էր աւելի խնամքով կատարել։

Գ. Լևոնեան

ՄԱՄՈՒԼ

Ցանկանալով ծանօթացնել մեր ընթերցողներին, թէ ինչպէս են մտածում ամերիկահայ սահմանադիր-ռամկավարները և ինչ հայեացք ունեն ներկայումս հայերիս զբաղեցնող ազգային գործերի վրա, մենք առաջ ենք բերում վերջին պօստով ստացված Բօստոնի «Ազգ» թերթի խմբագրական «Դաս մըն ալ» յօդուածից մի քանի բնորոշ քաղուածներ։ Ինչպէս կը տեսնեն ընթերցողները, թերթը նոյն կերպ մօտենում է հարցին, ինչպէս և մեր աշխատակից Գ. Մուրադեանը իր վերջին յօդուածով։

Խօսելով այն պատասխանատու ժամանակի մասին, և ցոյց տալով, որ «հազարից աւելի պատճառներ ունենք զգոյշ և վերապահ շարժվելու», թերթը գրում է.

Կամաւորներու խնդիր մը ունինք այսօր, իրաւամբ կը յուսանք որ մեր դատին նպաստաւոր լուծում մը՝ մեր ազատագրութիւնը պահանջելու և ձեռք բերելու համար, անոնք զօրաւոր կռուան մը պիտի ընծայեն մեզի, ասկէ զատ աներև է թէ զէնքի ոյժը, որուն կը փարի Հայաստանի ժողովուրդը, այժմէն իսկ հայ ազգին գոյութեան տեսակէտով փրկարար դեր մը կը կատարէ։ Այս իսկ պատճառաւ կամաւորական շարժումներուն հանդէպ մենք պէտք է ցոյց տայինք վայելուչ լըրջութիւն, իմաստութիւն և՝ անպատեհ չէրսել՝ ակնածանք, ու երբէք զանոնք նիւթ չդարձնէինք թեթեւսոլիկ գովաբանութիւններու, յոխորտանքի եւ մանաւանդ շահախնդրութեան։

Հին առած մը կըսէ. «Աստուած, փըրկէ զիս բարեկամներէս, թշնամիներուս հետ ես գործս կրնամ կարգադրել»։ Մեր քաջարի կամաւորներն ալ այս պահուս կրնան ըսել շատ պատշաճ կերպով. «Աստուած, պահէ մեզ մեր փառաբանողներէն, թիւրքին հետ մենք գլուխ կելլենք», այնքան գձուձ, անտեղի ու իրենց գործունէութեան համար վնասակար աղմուկի ու հրատարակութեանց առարկայ եղան ու կըլլան անոնք։

Կամաւորական խումբերու ու շարժումներու մասին ալ ի՛նչ բան մնաց որ հարիւր անգամ գրուած ու խօսուած չըլլայ հրապարակի վրայ։ Այսօր ամէն մարդու գիտցած բանն է, թէ քանի կամաւորական խումբեր կան, ինչ է անոնց իւրաքանչիւրին թիւը, որոնք են խմբապետները, նոյնիսկ հարիւրապետներուն պետը, որոնց առանձին պատկերներն ու խմբանկարները տարբեր ու փոփոխված տարազներով ու ձևերով լրագիրներուն առաջին էջերը կը զարդարեն։ Մինչև անգամ պէտք չտեսնուիր գաղտնի պահելու թէ կամաւորներու այս-ինչ կամ այն-ինչ խումբը ո՛ր շրջանակի մէջ կը գործէ, թէ անոնց ծախքը ինչպէս կը հոգացուի, ինչ տեսակ զէնքեր ու հագուստներ կը կրեն, թէ կամաւորները ո՛ր տեղերէն, ինչ թիւով ու ճամբաներով Կովկաս կերթան։ Հապա անոնց ոչ միայն ըրածներուն այլ և ընելիքներուն մասին եղած անպատեհ յայտնութիւննե՞րը, անոնց թիւին ու դերին շուրջ առաւ ու ամօթալի վիճաբանութիւննե՞րը և դեռ ուրիշ հազարումէկ մանրամասնութիւններ, որոնցմէ գործն ու կամաւորը ոչինչ չունին շահելիք, բայց կրնան շատ ինչ՝ ամեն բան վտանգել ու կորսնցնել։

Կըսուի թէ այս կարգի հրատարակութիւններ անհրաժեշտ են հայ ժողովուրդը խանդավառելու ու շարժելու համար։ Մենք այս ըմբռնումը ազգին երեսին նետուած նախատինք մը կը նկատենք։ Կը հասկընանք թէ բնութեան հարուածներուն տակ մարտիրոսացած ժողովուրդի մը կուրծքին տակ գոռայ ազատութեան տենչն ու վրէժի զգացումը, բայց չենք կրնար համոզուիլ թէ յաղթելու և ապրելու ընդունակ ազգ մը պէտք ունենայ այս տեսակ պոռոտ ցուցադրութիւններու և աղմկավարութեան՝ վայրկեանն և անոր պահանջները ըմբռնելու համար։ Եթէ հայ ազգին ծոցին մէջ դարերէ ի վեր անշէջ պլպլացող ազգային ոգին, զայն ոգեւորող իդէալը, եթէ գործին մեծութիւնը, նպատակին վեհութիւնն ու պարագաներուն սրտառուչ վսեմութիւնը չեն կրնար շարժել ու պարտականութեան լծել հայ ժողովուրդը, այս անիմաստ խանդավառութիւնները՝ որ կրակէ ու ջերմութենէ զուրկ յարդի բոցէն աւելի բան մը չեն արժեր, երբէք շարժելիք չունին, և քիչ կամ բնաւ օգուտ և շատ վտանգ ու աղէտ յառաջ կը բերեն, ու միայն կուսակցական կիրքերու և սնափառութեանց կրնան ծառայել։

Կիրք և սնափառութիւն, ահա այն խութերն ու խարակը՝ որ հայ յեղափոխական գործունէութեան մէջ անթիւ նաւաբեկութիւններու պատճառ եղած է, և որուն վրայ մի անգամ ընդ միշտ խորտակուած են մեր շատ մը գեղեցիկ յոյսերն ու խոստմնալից ծրագիրները։ Ուշի ուշով պրպտեցէք հայ յեղափոխութեան վերջին քառորդ դարու պատմութիւնն ու հոն շատ քիչ դէպքեր ու շարժումներ պիտի գտնէք, որ որոշ նպատակի համար, յատուկ ծրագրով և լուրջ պատրաստութեամբ տեղի ունեցած ըլլան ընդհակառակը, իւրաքանչիւր քայլափոխին պիտի հանդիպիք անհամար ձեռնարկներու, որոնք պարզապէս մասնաւոր շահերու և սնափառութեան մարմաջի մը արդիւնքն են։ Այս-ինչ տեղ հրոսախումբ մը կը կազմակերպուի, թէ ո՛ւր պիտի երթան և ի՛նչ արդիւնքի պիտի յանգին, ոչ խումբը գիտէ ու ոչ ալ ղրկողները։ Ժամանակն ու պայմանները բոլորովին աննպաստ են, տասնեակներով, նոյնիսկ հարիւրներով կտրիճներ կիյնան, բնաջինջ կըլլան, հարիւրաւոր գիւղեր կրակի կը տրուին ու օջախները կը մարին։ Այս խել խոլ ձեռնարկը կը յղացուի, գործունէութեան կը դրուի, գիտէք ինչու,—որպէսզի ուրիշ տեղ մը իբր յեղափոխական գործունէութիւն քշուի ժողովուրդին, առատ դրամ հանգանակել և խորախորհուրդ նպատակներու գործածել կարելի ըլլայ։ Յաճախ երևակայական շարժումներու, պատրաստութիւններու վէպ մը կը հիւսուի, որովհետև այս-ինչ շրջանակին մէջ շարքերը խանդավառելու ստուարացնելու պէտք կայ, և մինչդեռ հոս ու հոն մայթի հերոսները կը սնքան ու կը մեծաբանեն, անդին երկրին խուլ անկիւններուն մէջ բռնութիւնը իր լախտի հարուածները կը տեղայ հայութեան կուրծքին, քամակին, գլխուն։ Ե՛հ գործը այսպէս կը պահանջէ, տեղի չկայ բծախնդիր ըլլալու և խղճահարելու։

Մենք զմեզ ցուցադրելու, սնապարծութեան ախտը այնքան խոր վարակած է մեզ, այնքան ապականած է մեր հանրային նկարագիրը, որ մենք մեր մէջ ի բնէ թոյլ կարգապահութեան ոգին իսպառ կորսուած անդեկ, անկերպարան զանգուած մը դառնալու վտանգին մէջ կը գտնուինք...

Եւ թերթը խօսքը վերջացնում է այս նկատողութեամբ.

Ոմանք գիտել կուտան որ այս կարգի քննադատութեանց ժամանակը չէ հիմա, բայց, եթէ ոչ այսօր՝ ե՞րբ աւելի պատեհ է այս խնդիրները յուզել, հրապարակ դնել։

Ազգն իր ազատութիւնը կերկնէ իր գոյութեան գնով, բայց եթէ իր առողջութեան պէտք եղած խնամքը չտարուի, եթէ իր ներքին հիւանդութիւնները մատնանիշ չըլլան ու չդարմանուին, ծնած մանուկը ախտաժէտ կըլլայ՝ չապրիր։

Գիտենք ասիկա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Ռաշտ, 20 օգոստոսի

Տարիներ, տասնեակ տարիներ շարունակ, հայ մամուլը, մասնաւորապէս «Մշակը» երբէք չէ թերացել հինաւուրց Պարսկաստանի քաղաքական, հասարակական և տնտեսական կեանքը բարեացակամօրէն խորհրդածութեան նիւթ դարձնել և նրա բարգաւաճման մասին ցուցումներ տալ։ Նասրէդդին շահի վերաբերմունքը դէպի հայերը ոչ միայն մոռացնել տուեց վերջիններիս անցեալի կրած անասելի տառապանքները, այլ լցրեց բոլոր հայերի սրտերը երախտագիտութեան վառ զգացմունքներով, որոնք բոլոր ասպարէզներում արտայայտվել են բացորոշ կերպով։ Պարսկաստանը տակաւին Շահ-Աբաս Մեծի օրերից զգաց հայի կարողութիւնները և շինարար ոգին, ուստի ամեն միջոց գործադրեց նրան գրաւելու դէպի Պարսկաստան և խրախուսելու ամեն տեսակ ձեռնարկութեան մէջ։ Ճարտարարուեստն ու վաճառականութիւնը զարգացաւ Պարսկաստանում շնորհիւ հայ արհեստաւորների և Ամստերդամից մինչև Չինաստան, Հնդկաստանից մինչ Մոսկվա երթևեկող Խօջա-Մինասների և Խօջա-Փարուխների ջորիների երկարաշարք կարաւաններով. և դանդաղաշարժ ու սակաւապետ պարսիկները օրինակ վերցնելով հայից, սկսեցին նոյն շաւղով ընթանալ, իւրացնել կենցաղավարութեան նոր կերպեր։ Ճոխ և հարուստ Գիլանը դեռ այսօր էլ երախտագիտութեամբ յիշատակում է հէքիմ Փանոսին, որ առաջինը եղաւ Ռաշտում ծխախոտի մշակութիւնը մացնող, որի շնորհիւ էլ այսօր միլիոնների արդիւնաբերութիւն է լինում։ Փոխադարձաբար Պարսկաստանը հայերին տալիս է ազգային, հասարակական, կրօնական և տնտեսական այնպիսի արտօնութիւններ և ազատութիւններ, որպիսին հայը աշխարհիս ոչ մի անկիւնում չէ կարողացել ձեռք բերել։ Եւ ահա այդ փոխ-յարաբերութիւնները ամուր շաղկապով կապել են հայերին թէ պարսիկ ժողովրդի և թէ հինաւուրց Իրանի հետ։ Եւ հայը չէ զլացել երբէք նախանձախնդիր լինել այդ երկրի բարօրութեան և բարգաւաճման։ Եւ հայը, այսօր էլ չէ գլանում ջանքեր գործադրել՝ Իրանը փրկելու վերահաս վտանգից, որին անմտաբար մղում են նրա թեթևամիտ գործիչները, կոյր գործիք դառնալով գերմանական չարամիտ ագենտների ձեռքին։ «Ջհանդամա գետան՝ եօլդաշ չօխ խաար» (դժոխք գնացողը՝ ընկերներ շատ է ուզում). թիւրքերն էլ ճգնում են իրանց ետևից քարշ տալ նաև հաւատակից պարսիկներին։ Հայն է միայն, որ բացորոշ կերպով տեսնում է Պարսկաստանին սպառնացող վտանգը և վշտահար ճիգեր է գործադրում նրան սթափեցնելու։ Թող Պարսկաստանի «բարեացակամի դիմակ կրողները» ի՛նչ կերպ կուզէ բացատրեն հայի բարեացակամութիւնը, բայց մենք անկեղծ նախանձախնդրի մեր հանգամանքով գալիս ենք նորից անաչառ «Մշակի» միջոցով բարձրագոչ ձայնելու. «Ո՛վ պարսիկ եղբայրներ, սթափվեցէք, ափսոս է ձեր սիրուն հայրենիքը, որ մեզ՝ հայերիս քաղցր ասպընջականութեան վայր է եղել, ափսոս է ձեր սիրուն վաթանը, որին մենք հայերս սիրում ենք որպէս մեր թշուառ վաթանին, ափսոս է ձեր աշխատասէր և չարքաշ ժողովուրդը, մի գլորէք նրան ատւանտիւրիզմի անդունդը, մի դարձնէք քաւութեան նոխազ բարբարոս Գերմանիայի և գազան օսմանցիների համար. սթափվեցէք, խղճացէք ձեր ժողովրդին»։

Պարսկական մամուլն ու ինտելիգենցիան, որ պարտաւոր էր փոքր ի շատէ խելահաս և շրջահայեաց լինել, այսօր աւելի քան խելակորոյս դիրք է բռնել... Այնպիսի անմիտ ստեր, այնպիսի յոռի մտքեր են տարածում։ որ մարդ ապշած է մնում. «մի՞թէ սրանք սպիտակի վրա սև գրող կամ կարդացողներ են»։ Պատմական այսպիսի խորհրդաւոր մի ժամանակամիջոցում, երբ աչալուրջ և խոհեմ վերաբերմունքով Պարսկաստանը կարող էր մի անգամ ընդմիշտ ապահովել իր քաղաքական դիրքը, եթէ ամուր կառչէին ռուս և անգլիական քաղաքականութեան, փոխանակ անմտօրէն գործիք դառնալու գերմանական և թիւրքական ագենտների ինտրիգներին։ Գերմանիան ոչ մի դրական կամ բացասական գործնական դեր չէ կարող խաղալ Պարսկաստանի ճակատագրի վերաբերմամբ. Անգլիան և Ռուսաստանն են, որոնցից կախված է Պարսկաստանի ճակատագիրը. մի՞թէ այդ չեն գիտակցում պարսիկ գիտակիցները, թէ գերմանական ոսկու ճաճանչները իրանց զօրեղ փայլով մթագնել են նրանց հոգու և սրտի տեսանելիքները...

—

Ղազվինի շրջակայքում շահսէվանները սկսել են կողոպուտներ և աւերածութիւններ. Ղազվինի ժանդարմերիան, որ ուղարկված էր նրանց զսպելու, կոր ի գլուխ ետ է փախել, թողնելով շատ դիակներ, ի թիւս որոց և մի շվէդացի օֆիցէր։ Ղազվինից և Թէհրանից օգնութիւն է խնդրվել. պարսկական կօզակների մի վաշտ ուղարկվել է օգնութեան։

—

Ռաշտում լուր է ստացվել, որ Թալիշներն ևս շարժվել են և մտադիր են յարձակվել և կողոպուտների ենթարկել շրջակայքը։ Անցեալ օրը մի խումբ ժանդարմներ ուղարկվեցին անհանգիստ Թալիշներին զսպելու։ Ասում են, որ յայտնի Զարղամի ցեղն է շարժվողը, որին անցեալներում ձեռք ձգեցին ռուսները, բայց հաւատալով նրա խոստումներին՝ ազատ արձակեցին։ Այժմ դրժում է իր խոստումը։

—

Որովհետև բրինձը չափազանց թանգացել է, ուստի Ռաշտի պարսիկ կանայք անցեալ օրը մի մեծ ցոյց կազմեցին։ Զինված մահակներով, ընկել էին փողոցները և դանակով պատռելով բրնձի պարկերը՝ շաղ էին տալիս, սպառնալով վաճառականներին բրինձ չարտահանել Ռուսաստան։ Պարսկաստանում դարերից ի վեր կանայք այդպիսի ցոյցեր միշտ արել են, թէև որոշ մարդիկ այդ արթնացման նշան են համարում, երբ թէ «Անահիտ մայրիկի» շնորհիւ երևան եկած... գուցէ այս էլ քաղաքական մի աստառ ունի...

Մար.

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ առ. 11—12 ժ.
ԲՈՒԺՈՂՆԵՐԸ
[illegible]
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—142

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՅԱԽՎԵՐԴԵԱՆ
[illegible]
№ 18.
1018. 100—74

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀ. ԱՒ.-ԲԱՀ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ
1. „Հայոց եկեղեցու համառօտ պատմութիւն“
Չորրորդ տպագրութիւն քարտէզով և
2. „Բրիտանեական Հայաստան, Յոյս եւ Սէր“
Երկրորդ տպագրութիւն
ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
Վաճառվում են բոլոր գրավաճառներում
(2.) 587. 2—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԵՕ
ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՎԱՒԵՐԱԳՐԵՐԸ
Հրատարակութիւն Ազգային Բիւրոյի
Գինն է 1 րուբլի
Դիմել «Գուտենբերգ» գրավաճառանոցին։
576. 2—2

Առևտրից [illegible] պատճառներով
ՏԱՐՎՈՒՄ Է
[illegible]
ՄԻ ԽԱՆՈՒԹ
[illegible]
Некрасовская ул. № 3, магазинъ „Реномэ“,
572. около пом. Воронцову. 4—3

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ
1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաղրամեան 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, Ա. Ք-ի 40 կ.
3) [illegible], 3 գործ. 60 կ.
4) [illegible], 3 գործ., 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամ 5 գործ. 50 կ.
6) [illegible], դրամ, 5 գործ. 40 կ.
[illegible] Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.
(3) 0—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ [illegible]
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀ. ՋԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Ընդունելութեան քննութիւնները օգոստոսի 24-ից [illegible] I Тумановская ул. с. д. № 13.
534. 10—6

Վաճառվում են
[illegible] խնդիրների
1) [illegible] 30 կ.
2) [illegible] 35 կ.
3) [illegible] 35 կ.
Ս. Տէր-Միքայելեան
(օ. մ.) 574. 4—3

Լոյս տեսաւ
Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ կազմած
ՀԱՏԻԿՆԵՐ
[illegible]
Գինն է 80 կոպէկ
[illegible]
(օ. մ.) 554. 4—4

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.